ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015Թ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եղեգնաձոր 2016թ

Ընդհանուր տեղեկություններ մարզի մասին

Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ արևելքում, սահմանակից է Արարատի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերին, հարավ արևմուտքից Նախիջևանի ինքնավար հարապետությանը, ընդգրկում է Արփա գետի ավազանը, ունի լեռնային մակերևույթ: Մարզը զբաղեցնում է 2306 քառ.կմ տարածք, ունի 44 համայնք՝ 3 քաղաքային /Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ/ և 41 գյուղական, մարզկենտրոնն է Եղեգնաձոր քաղաքը:

Մարզի ցածրադիր գոտում /մինչև 1400 մ. բարձրությունը/ կլիման չոր է, օրական ջերմաստիճանների մեծ տատանումներով, մինչև 400 մմ. տեղումներով: Բարձրադիր գոտիներին՝ 1400-2800մ. բարձրությունները, բնորոշ են լեռնատափաստանային և լեռնաանտառային լանդշաֆտները:

Մարզն աչքի է ընկնում պատմա-ճարտարապետական և մշակութային արժեք ներկայացնող հուշարձաններով՝ եկեղեցիներով, վանքերով, խաչքարերով, հնագիտական բազմապիսի արժեքներով: Մարզի բնության գեղատեսիլ վայրերում տեղակայված են առողջարաններ, հյուրանոցներ և հանգստյան տներ: Մարզի տարածքը հարուստ է կրաքարերի, բազալտի, գրանիտի, ֆելզիտի, մարմարի, ապակու հումքի /կվարցային ավազ/ մեծ պաշարներով, ունի կադրային մեծ ներուժ՝ նշված հումքային բազայի վրա արտադրություն կազմակերպելու համար:

Գյուղատնտեսություն և բնապահպանություն

Բնակլիմայական բարենպաստ պայմանները հնարավորություն տվեցին գարնան գյուղատնտեսական աշխատանքները սկսել ժամանակին:

Պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին է հատկացվել 428տ ազոտական, 10.75տ կալիումական, 10.65տ ֆոսֆորական պարարտանյութեր, 33873լ դիզելային վառելանյութ, 87,1տ գարնանացան գարու, 2.65 տ առվույտի , 5.6տ կորնգանի, 0.325տ եգիպտացորենի և 104տ աշնանացան ցորենի սերմացուներ :

Ընդհանուր առմամբ գյուղատնտեսական տարին նպաստավոր էր և նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները բոլոր բնագավառներում՝ բացառությամբ հացահատիկի,գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշները:

Մարզի հողօգտագործողների նպատակային աշխատանքի, պետական աջակցության ծրագրերի, համայնքների ղեկավարների, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, մարզպետարանի և ջրօգտագործող ընկերությունների համագործակցված աշխատանքի շնորհիվ 2015թ.մարզի ընդհանուր ցանքային տաածությունը կազմել է 5713հա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 1021 հա-ով: ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 17-ի թիվ 1066-ն որոշմամբ,սահմանված կարգով, մի շարք համայնքներում վարելահողերի և արոտների վրա հիմնված 248.0 հա բազմամյա տնկարկները (պտղատու այգի 146.8հա, խաղողի այգի 101.2հա) հաշվառվել են 2015թ. հողային հաշվեկշռում:

Ներկայացվում է 2014-15թթ. գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները աղյուսակի տեսքով.

Արտադրված 5708տ խաղողից վերամշակող ձեռնարկությունների կողմից մթերվել է 4645 տ. բարձրորակ խաղող, որի դիմաց վճարման ենթակա գումարը կազմել է **784.8** մլն դրամ :

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարածությունը / հա			Համախառն բերքը / տ /			
		2014թ	2015թ	Տարբ.	2014թ	2015թ	տարբ	%
1	հացահատիկ և հատիկաընեղեն	2607	3258	651	6782	6665	-117	98.3
2	Բանջարեղեն	407	495	88	7632	9403	1771	123.2
3	Բոստան	36	38	2	712	816	104	114.6
4	Կարտոֆիլ	179	200	21	3370	3739	368	111
5	Պտուղ, հատապտուղ	1966	1966		5443	8440	2997	155.1
6	Խաղող	916	816.3		5107	5708	601	111.8
7	Խոտ				29283	30671	1388	104.7
8	Ընդ.ցանքատարածություն	4692	5713	1021				
9	Կաթ տ.				25462	25500		100.2
10	Միս տ.				5950	6300		105.9
11	Ձու մլն. հատ				20.4	20.9		100.0
	Համախառն արտադրանքը մլրդ. դրամ				20.8	21.4		2.9

<<Հայկական միրգ>> ծրագրով 2015 թվականին մարզի համայնքներում հիմնվել է 46,12 հա պտղատու այգի, որից՝

1. Վերնաշեն 4.02 հա կեռասենու այգի
2. Խնձորուտ 5.2 հա կեռասենու այգի
3. Արին 17.2 հա ընկուզենու այգի
4. Ազատեկ 6.5հա բալենու, 2.7հա դեղձենու, 2.2 հա ընկուզենու 8.3 հա սալորենու այգիներ: /ընդամենը՝ 19.7հա/:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզին հատկացված 5կգ ռոդիֆակում թունանյութով մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ են իրականացվել Ազատեկ համայնքի 62.5հա հողատարածքի վրա:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության մասնագետների հետ համատեղ մշտական ուսումնասիրություն է իրականացվում բույսերի կարանտին և ոչ կարանտին հիվանդությունների և վնասատուների հայտնաբերման ուղղությամբ:

Վարչության կողմից համակարգվել է անասնաբուժական ծառայությունների միջոցով պետական պատվերով նախատեսված բուժպրոֆիլակտիկ միջոցառումների իրականացումը մարզի համայնքներում : Կանխարգելիչ նպատակով սիբիրախտ, դաբաղ, էմկար, պաստերելիոզ հիվանդությունների դեմ պատվաստվել են 149584 գլուխ խոշոր եղջրավոր կենդանիներ, մանր եղջրավոր կենդանիների դաբաղ հիվանդության դեմ՝ 22333 գլուխ, խոզերի ժանտախտի դեմ 8932 գլուխ կենդանիներ և թռչունների կեղծ ժանտախտի դեմ՝ 64884 թև թռչուն: Ախտորոշիչ միջոցառումների իրականացման արդյունքում բրուցելյոզ հիվանդության նկատմամբ հետազոտվել են 22008 գլուխ խոշոր և 16750 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, հայտնաբերվել են 66 գլուխ խոշոր և 275 գլուխ մանր եղջրավոր բրուցելյոզով հիվանդ կենդանիներ:

Օրենքով սահմանված կարգով իրականացվում է վտանգված անասնագլխաքանակի շարունակական առողջացումը:

2016 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 21276 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝8655 գլուխ, մանր եղջերավոր՝ 21691 գլուխ , խոզեր՝ 2627գլուխ , թռչուններ116557թև և մեղվաընտանիք՝ 22570փեթակ:

2015 թվականի հունիսի 15-ին շահագործման է հանձնվել Եղեգնաձորի պահածոների գործարանը , ներդրվել է շուրջ 800մլն. դրամ:

Արտադրամասում տեղակայվել են ռուսական, իտալական, չինական արտադրության սարքավորումներ, որոնք թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600 տոննա պտուղբանջարեղեն և արտադրել շուրջ 2,5 մլն սպառողական տարա :

Գործարանում աշխատում են 240 աշխատակիցներ, որոնց միջին աշխատավարձը կազմում է շուրջ 86 000 դրամ :

2015թ մայիսի 29-ին տեղ ունենացավ <Էկո Ֆարմ> ՍՊԸ-ին պատկանող, 500 գլուխ կթու կովերի համար նախատեսված անասնապահական համալիրի բացման հանդիսավոր արարողությունը՝ Վայոց ձորի մարզի Գնդեվազ համայնքում ,որն իր տեխնիկական հագեցվածությամբ չի զիջում Եվրոպական և Ամերիկյան որակի ու կառավարման չափորոշիչներին:

Ներկայումս ընկերությունը ունի 300 գլուխ կենդանիներ, որոնցից կթու կովերի թվաքանակը կազմում է 150 գլուխ:

Համալիրում պահվում են Գերմանիայից ներկված տոհմային Ֆլեգվի և Հոլշտին ցեղատեսակի կենդանիներ, ինչպես նաև մսատու Անգուս ցեղատեսակի կովերի փոքր խմբաքանակ, որոնք օգտագործվում են բարձրակարգ մսի արտադրության նպատակով:

Համալիրը արտադրված կաթը վերամշակում է՝ արտադրելով պրեմիում որակի «Զանախ» տեսակի պանիր:

Վերագործարկված Գնդեվազի թռչնաբուծական ֆաբրիկայում օրեկան արտադրվում է 60-65 հազար ձու, որն իրացվում է ներքին շուկայում:

Զառիթափ համայնքում շահագործման է հանձնվելու ժամանակակից սպանդանոց՝ հերթափոխին 30 գլուխ խոշոր և 300 գլուխ մանր եղջրավոր կենդանիների սպանդ հզորությամբ:

Վարչության կողմից համակարգվել է <<Եղեգնաձոր>> ՋՕԸ –ի կողմից ոռոգման ջրի անխափան մատակարարման, առաջացած խնդիրների լուծման ու վերացման, միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերանորոգման, ինչպես նաև ոռոգման ջրի մատակարարման պլան ժամանակացույցի խախտումները նվազագույնի հասցնելու աշխատանքները: :

Ոռոգման սեզոնի ընթացքում ջուրօգտագործողներին է տրվել 9 724հազ. խմ ոռոգման ջուր , որի հասույթը կազմել է 106964 հազ. դրամ, գանձվել է 100266 հազ. դրամ, որը կազմում է հասույթի 93.7 %-ը:

Ափապաշտպան կառույցներ ստեղծելու նպատակով ուսումնասիրվել է Եղեգիս և Արփա գետերի առավել սելավավտանգ հատվածները և այն ներկայացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, հակահեղեղային միջոցառումների իրականացման ծրագրերում ընդգրկելու համար, սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով 2015թ .հակահեղեղային միջոցառումներ չեն իրականացվել:

Գյուղատնտեսության զարգացման կարևոր նախադրյալներից է նաև արտադրության կազմակերպման մեքենայացումը: Մարզում հաշվառված է 424 տրակտոր, 23 հացահատիկահավաք կոմբայն, 256 տրակ-տորային կցասայլ, 124 տրակտորային խոտհնձիչ, 6 կերահավաք կոմբայն, 90 հավաքիչ-մամլիչ և այլ գյուղատնտեսական տեխնիկա, դրանց սարքինության մակարդակը՝ միջինը շուրջ 75.6% է՝ հանրապետական միջինի՝ 79.3%-ի համեմատ :

«ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման ու հավաքակազմի աստիճանա
բար նորացման աշխատանքների իրականացում» ՀՀ կառավարության 2013թ.-ի գերակա խնդրի լուծման շրջանակներում 13.06.2013թ. թիվ 588-Ն և 20.06.2013թ. թիվ
650-Ն որոշումների հիման վրա 2014թ.-ին ձեռք են բերվել 5 ՄՏՅ-82.1 տրակտորներ,
որոնց իրացումն իրականացրել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը (լիզինգային եղանակով):
2014թ. ընդհանուր առմամբ գնվել են 22 միավոր տարբեր հզորության տրակտորներ իրենց գյուղ գործիքներով:

2015թ.-ին լիզինգային եղանակով ձեռք է բերվել Բելառուսի Հանրապետությունից ներկրված «Նիվա էֆեկտ» մակնիշի մեկ հացահատիկահավաք կոմբայն, իսկ մասնավոր գնումով ձեռք է բերվել CAT 320 DL մակնիշի մեկ էքսկավատոր , YUTO-404 մակնիշի մեկ տրակտոր, մեկ հատ <<Սամպո>> մակնիշի հացահատիկահավաք կոմբայն, երկու հատ E 302 մակնիշի կերահավաք կոմբայն, երկու հատ T 150 մակնիշի անիվավոր տրակտոր, մեկ հատ ազոտական գութան, երկու հատ կուլտիվատոր, մեկ հատ շարքացան,երկու հատ կախովի խոտհնձիչ, մեկ խոտհավաք: Ընդհանուր առմամբ 2015թ ձեռք է բերվել է 8 միավոր տարբեր հզորության գյուղ տեխնիկա և յոթ միավոր գյուղ գործիքներ:

Գյուղացիական տնտեսություններին պատկանող հողակտորները փոքր են և գտնվում են տարբեր հանդամասերում, իսկ եղած բազմամյա տնկարկների մեծ մասը հին են ու մշակության համար ոչ մեքենահարմար: Ինտենսիվ գյուղատնտեսություն վարելու նպատակով խիստ անհրաժեշտություն է առաջացել կազմավորելու գյուղատնտեսական կոոպերատիվներ:

Անասնաբուժության ռազմավարական զարգացման շվեցարական գրասենյակի կողմից մարզի Բարձրունի, Մարտիրոս, Խնձորուտ,Հերհեր, Գնդեվազ, Կեչուտ, Զառիթափ, Ազատեկ,Գետափ, Արտաբույնք, Խաչիկ, Ռինդ, Ելփին, Շատին համայնքներում ստեղծվել են անասնաբուժական կետեր, ամեն կետի համար գնվել է մեկ միլիոն դրամի դեղորայք և գործիքներ, և 300 000 դրամի գույք: Ընթացքի մեջ է Ելփին, Վայք,Գնդեվազ և Գլաձոր համայնքներում Արհեստական սերմնավորման կետերի կազմավորումը: Գրասենյակի կողմից իրականացվում է նաև համակարգչային ուսուցում համայնքներին ծրագիրը Կեչուտ, Գնիշիկ, Աղնջաձոր և Վարդահովիտ համայնքներում: Գյուղապետարանների աշխատակիցներին ուսուցումն ավարտելուց հետո կտրամադրվեն համակարգիչներ:

Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ընդգրկվել են Աղնջաձոր, Ռինդ, Վերնաշեն, Զառիթափ և Սարավան համայնքները: Նախատեսվում են կատարել արոտների ջրարբիացման, կերախմոցների տեղադրման, ճանապարհների բարեկարգման, ջրընդունիչների և փարախների կառուցման աշխատանքներ՝ մոտավորապես 100մլն դրամ արժողությամբ:

Գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով համայնքներում ստեղծված կոոպերատիվներին նախատեսվում է տեխնիկայի ձեռք բերման համար տրամադրել շուրջ 202 մլն. դրամ:

Գրեթե ամեն տարի մարզի գյուղատնտեսությանը մեծ վնաս են պատճառում բնական աղետները՝ /ցրտահարություն, կարկուտ, հեղեղ և այլն/: Վերջին տարիներին մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ և Գետափ համայնքներում տեղադրվել են վեց հակակարկտային կայաններ, որոնց միջոցով հնարավոր չէ կարկտահարության դեմ պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնել մարզի ողջ տարածքում:

Մայիսի 15-ին կարկտահարության հետևանքով տուժել են Աղավնաձոր /86.49հա/, Ռինդ/130.29հա/ և Չիվա/58.3հա/ համայնքների խաղողի ու պտղատու այգիները, ինչպես նաև հացահատիկի և բանջարային մշակաբույսերի սածիլված ցանքատարածությունները: Նշված համայնքներում վնասը կազմել է՝ 242.2 մլն. դր.:

ՀՀ կառավարության 2015թ հուլիսի 2-ի համար 766-Ն որոշմամբ նշված համայնքների գյուղացիական տնտեսությունների ջրի վարձը և հողի հարկը փոխհատուցվել է 100%-ով, օգոստոսի 22-ին կարկտահարությունից տուժեցին նաև Եղեգնաձոր /7.92հա/ և Գետափ /16.08հա/ համայնքների խաղողի այգիները և բանջարանոցային մշակաբույսերը: Կառավարության հոկտեմբերի 22-ի համար 1249-Ն որոշմամբ 65%-ով փոխհատուցվել է Եղեգնաձոր և 80%-ով Գետափ համայնքների կարկտահարությունից տուժած գյուղացիական տնտեսությունների ոռոգման ջրի վարձը:

Մթնոլորտային տեղումների տևական բացակայությունը հանգեցրեց երաշտի. որի պատճառով զգալիորեն տուժեցին հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները:

2015 թվականի ընթացքում ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 1 մլրդ 77մլն 486հազար դրամ դրամ գյուղատնտեսական վարկ, որից սուբսիդավորված՝ 678 մլն 110 հազար դրամ:

Բնապահպանություն

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել են մարզի տարածքում բնապահպանական խնդիրները և լուծման նպատակով համապատասխան մարմիններին ներկայացվել են առաջարկություններ:

Օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում Վայք և Եղեգնաձոր քաղաքների աղբավայրերի շահագործման ուղղությամբ, իսկ կանոնակարգված աղբաթափություն իրականացնելու նպատակով Եղեգնաձոր քաղաքի աղբավայրի մուտքը ցանկապատվել և տեղադրվել է դարպաս: Ընդունվել է աշխատակից, որի միջոցով իրականացվում է շուրջօրյա հերթապահություն, ինչպես նաև աղբանոցի մաքրված տարածքներում մարզպետարանի աշխատակիցների կողմից տնկված տնկիների անհրաժեշտ խնամքի աշխատանքները:

Ջերմուկ և Վայք քաղաքներում սեփական միջոցների հաշվին տեղադրվել է՝ Ջերմուկում՝ 14 աղբարկղ, իսկ Վայքում 10 աղբարկղ:

Այս պահին մարզի գյուղական համայնքներում չհսկվող և չարտոնագրված աղբակույտեր գործնականում գոյություն չունեն:

Մարզպետարանի կողմից աշխատանքներ են տարվում կենտրոնացված և միջհամայնքային աղբավայրերի տեղադրման ուղղությամբ:

Տարվա ընթացքում համակարգվել է մարզի տարածքում գործող անտառտնտեսությունում տարվող աշխատաքները՝ անտառների էկոլոգիական և սոցիալական նշանակության բարձրացման, անտառների վիճակի բարելավման, պահպանության, պաշտպանության, ընդլայնված վերարտադրության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Մշտական ուշադրության կենտրոնում է անտառների հակահրդեհային և կանխարգելիչ միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքները: Մարզի տարածքում գործող անտառտնտեսության հաշվեկշռում գտնվող 13687.8 հա հողատարածքներից անտառածածկ է 10156.1 հա: ՈՒսումնասիրությունների արդյունքում բացահայտված բացթողումները վերացնելու նպատակով առաջարկվել է ուժեղացնել տեսչական աշխատանքները ջրօգտագործող և ընդերք շահագործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը բնապահպանական օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Բնապահպանական պետական տեսչության Վայոց Ձորի տարածքային բաժնի, մարզային ոստիկանության, անտառտնտեսության և մարզպետարանի կողմից իրականացված տեսչական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է ապօրինի ծառահատման՝ 6 , ձկնագողության՝ 18 և որսագողության 2 դեպքեր, բնությանը հասցված վնասը վերականգնված է:

Հաշվետու ժամանակաշրջանում ապօրինի ընդերք շահագործման կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել: Արձանագրվել է հողի բերրի շերտի օգտագործման կարգի խախտման 2 դեպք: Մարզի տարածքում գործում են.

- հանքային ջրերի 3 հանքավայր
- հանքային ջրերի շշալցման 4 գործարան
- քարի արդյունահանման 7 հանքավայր
- քարի վերամշակման 9 արտադրամաս:

Հողաշինություն և հողօգտագործում

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 230783.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 190332.9 հա, այդ թվում վարելահող՝ 15955.1 հա, բազմամյա տնկարքներ՝ 1627.7 հա, խոտհարքներ՝ 5014.4 հա, արոտ՝ 92303.4 հա, այլ հողատեսքեր 75432.5հա:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել 27 համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 39 առաջարկություններ, որոնց միջգերատեսչական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ, որոնք սահմանված կարգով փոխանցվել են համապատասխան համայնք: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30 հուլիսի 1998 թվականի թիվ 479 որոշմամբ սահմանված 3-րդ կետի՝ Աղնջաձորի և Շատինի համայնքներում կատարվել են հողամասերի գործառնական նշանակության փոփոխություններ:

ՀՀ կառավարության հունվարի 14-ի 2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ 5 հողամասերի օտարման և 2 հողամասերի կառուցապատման առաջարկություն է ներկայացվել ՀՀՏԿ և արտակարգ իրավիճակների նախարարություն, որի վերաբերյալ ստացել ենք դրական եզրակացություն:

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 10066-Ն որոշմամբ Արենիի, Գետափի,Ռինդի, Ազավնաձորի, Վերնաշենի, Արփիի, Գնդեվազի, Արինի և Ազատեկի համայնքներում բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրաժեքից՝ բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 233.26 հա ,որից փոփոխվել է խաղողի այգի 104.8 հա, պտղատու այգի 128.46 հա, որը արտացոլվել է մարզի 2015թվականի հողային հաշվեկշռում: ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 15 համայնքներում: Ուսումնասիրությունների արդյունքում մի շարք համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝ օտարվող հողամասերի չափերը պակաս են եղել նվազագույն չափերից, օտարման արձանագրությունները կազմվել են ոչ ճիշտ, պայմանագրերը ժամանակին չեն ներկայացվել պետական գրանցման: Մարզպետի մոտ քննարկման ժամանակ համապատասխան համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարճ ժամկետում նշված թերությունները վերացնել:

Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օտարվել է 74.243 հա, որի ընդհանուր գումարը կազմում է 9190466.85դրամ, որը հիմնականում ծախսվել է կապիտալ ակտիվների ձեռքբերման և շենքեր-շինությունների վերանորոգման համար:

Տարի	Վարձակալվող հողատարածք հա	Պայմանագրերի քանակը	Հաշվարկվել է վարձավճար հազ. դրամ	Գանձվել է հազ. դրամ	Տոկոս
2015	13085.4	1425	28586.8	30254.7	105.8
2014	11070.68	1383	41426.67	61632.3	148.7

2014 թվականի գանձումների գերակատարումը կատարվել է նախկին տարիների ապառքների հաշվին:

Մարզի հողերի օգտագործման մակարդակը դեռևս բավարար չէ, որի հիմնական պատճառներն են.

- վարելահողերի 78 % -ը անջրդի են,
- հողերի բնական ցածր բերրիություն,
- բնակավայրերից հեռու գտնվելը:

Արդյունաբերություն

2015թ.Վայոց ձորի մարզում, ըստ արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ընթացիկ գներով) թողարկվել է 15.65 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 15.71 մլրդ. դրամի արտադրանք. աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 1.3 % :

:

Մարզի արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռում են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմել են 22.5% և 60.0%, որոնք թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 43.8%-ը: Մարզի խոշոր և միջին կազմակերպություններին, որոնք կազմել են ընդհանուր թվաքանակում 12.5%, բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 52.9%-ը: Մարզի մշակող արդյունաբերության ծավալի մեջ գերակշռող է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը:

Մարզպետարանը մարզի գործարարներին, ձեռներեցներին աջակցում է թողարկվող արտադրանքի գովազդման, հանրապետական և միջազգային ցուցահանդեսներում նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ:

Մարզում գործարարության աշխուժացման նպատակով բազմակողման համագործակցության հուշագիր է ստորագրվել Իրանի իսլամական Հանրապետության ՈՒրմիա նահանգի, ՌԴ Նիժնի-Նովգորոդի, Արխանգելսկի և ՀՀ Վայոց ձորի մարզի ղեկավարության միջև:

Մարզի տնտեսության և մասնավորապես արդյունաբերության զարգացման ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ՝

Մարզի տնտեսության զարգացման համար դեռևս բավարար չեն կատարված ներդրումների ծավալները :

Արդյունաբերության ոլորտում դեռևս չի ձևավորվել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման մեխանիզմը, ցածր է մնում արտադրության արդյունավետության և տնտեսական ներուժի օգտագործման մակարդակը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպիսի ներդրումները արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները: Այստեղ որոշիչ է մարզպետարանի, Մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը, ընդ որում՝ ինչպես տարածքաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

Արտաքին կապեր

ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Արխանգելսկի մարզերի միջև բազմակողմ համագործակցության շրջանակներում 2015թ. հունվարի 29-ից փետրվարի 1-ը Հայաստանում էր գտնվում Արխանգելսկի մարզի պատվիրակությունը: Քննարկվեցին մարզերի միջև համագործակցության ներկա վիճակը, ստորագրված Համաձայնագրի կատարման ընթացքը, այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Նահանգապետի տեղակալը բարձր գնահատեց արդեն ձևավորված գործընկերությունը, մասնավորապես կարևորեց ձեռք բերված պայմանավորվածությունները՝ զբոսաշրջության բնագավառում համագործակցությունը խորացնելու ուղղությամբ: Հունվարի 30-ին հյուրերն այցելեցին Մալիշկա համայնք, որտեղ Սուրբ.Աննա եկեղեցու հարևանությամբ տեղադրվել է Արխանգելսկից ուղարկված Ուղղափառ եկեղեցու Խաչը: ՀՀ Վայոց ձորի մարզպետը ՀՀ Վայոց ձորի մարզի և ՌԴ Նիժնի Նովգորոդի նահանգի միջև 19.04.2011 թվականին ստորագրված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային բնագավառներում Համագործակցության համաձայնագրի շրջանակում, փոխադարձ այցով 2015 թ մայիսի 18-ից 21-ը գտնվում է ՌԴ Նիժնի Նովգորոդի նահանգում: ՌԴ Նիժեգորոդի նահանգապետ Վալերի Շանցևի հետ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի պաշտոնական հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ Վայոց ձորի մարզի և ՌԴ Նիժեգորոդի նահանգի միջև Փոխըմբռնման հուշագրի շրջանակում մշակութային և առևտրատնտեսական համագործակցության բնագավառում մինչ այդ կատարած աշխատանքները և հետագա համագործակցության հեռանկարային քայլերի հետ կապված հարցերը: Մայիսի 20-ին տեղի է ունեցել հանդիպում-քննարկում փոքր և միջին ձեռնարկությունների, ինչպես նաև տուրիստական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչները հետաքրքրված են եղել Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական արտադրանքի տեսականու հարցերով և արտադրության ծավալներով, հետագա փոխշահավետ համագործակցության նպատակով: Իսկ տուրիզմի ներկայացուցիչներին հետաքրքրել է Վայոց ձորի մարզի տուրիստական պոտենցիալը՝ էկոտուրիզմից մինչև առողջարանային տուրիզմ: Այնուհետ կազմակերպվել է այց Գորկի քաղաքի Ավտոգազ գործարան, որտեղ բանակցություններ են վարվել հետագա հնարավոր համագործակցության նպատակով: Մայիսի 20-ի երեկոյան մարզպետը հանդիպում է ունեցել հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում խոսվել է երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի մասին: 2015 թվականի հունիսի 11-ին Վայոց ձորի մարզպետի մոտ կայացավ հանդիպում, որին մասնակցում էին ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյի կուսակալության պատվիրակության անդամները: Պատվիրակությունը ղեկավարում էր Խոյի կուսակալ Հուսեյն Սեյվանին: Մարզպետը կարևորեց երկու պետությունների վարչական շրջանների միջև հաստատված սպորտային և մշակութային հարաբերությունները և հավելեց, որ ժամանակն է հաստատել նաև տնտեսական հարաբերություններ: Մարզպետը շեշտադրեց Համագործակցության հուշագրով ամրագրված գործագործության, անասնապահության, զբոսաշրջության և ՓՄՁ ոլորտներում տնտեսական հարաբերություններ հաստատելու հնարավորությունները: ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը և ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյի կուսակալ Հոսեյն Սեյվանի Ասլը ս/թ հունիսի 11-ին ստորագրել են Հուշագիր, ըստ որի՝ երկու հարևան երկրների՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության բարեկամական հարաբերությունների հետագա զարգացման և բարձրաստիճան պաշտոնյաների փոխադարձ պայմանավորվածությունների իրականացման համար ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյի կուսակալությունը և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը ընդլայնում են տնտեսական, մշակութային, մարզական համագործակցությունը, հիմք ընդունելով՝ 05.11.2010

թվականին Խոյ քաղաքում կնքված հուշագրի 9-րդ նիստի 1, 6, 2 կետերի պահանջները: Կողմերը համաձայնվում են փոխադարձ համագործակցության շարունակմանը նախկինում ստորագրված Հուշագրի հետևյալ կետերով.

1. Կողմերի միջև նախկինում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Պայմանավորվող կողմերը գործնականում կիրառելի կդարձնեն մարզական և տուրիստական խմբերի փոխադարձ այցելությունները:
2. Նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու համար, հարաբերությունների առավել զարգացման նպատակով, կողմերն օժանդակելու են մասնագիտական խմբերի ստեղծմանը և տնտեսական, առևտրային և մշակութային ոլորտներում համատեղ քննարկումներ կազմակերպելուն, քննարկումներին մասնակից դարձնելով մասնավոր սեկտորի ակտիվ տնտեսվարողներին: Առաջիկա քննարկումը կկազմակերպվի Խոյ քաղաքում: Հանդիպումների ժամանակացույցը կմշակվի երկկողմ պայմանավորվածությունների արդյունքում:
3. Հասարակական, մշակութային և սպորտային հարաբերությունների խորացման և զարգացման նպատակով կողմերը կարևորել են ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք, Եղեգնաձոր, Ջերմուկ քաղաքների ղեկավարների և ԻԻՀ Արևմտյան Ատրպատականի նահանգի կողմից Խոյի քաղաքապետի միջև հանդիպումները: Կուսակալն առաջարկեց բարեկամ մարզերի գործարարների հանդիպում կազմակերպել Խոյ քաղաքում, օգտագործելով նաև նրանց կարողությունները, համագործակցության այլ ոլորտներ գտնելու համար, ինչպես նաև շարունակել խորացնել մարզամշակութային հարաբերությունները: Մարզպետը մատնանշեց մարզի առողջարանային զբոսաշրջության հարուստ ռեսուրսները և անասնաբուծության համար նպաստավոր պայմանները: Իսկ կուսակալը նշեց, որ կարող են օգտվել ԻԻՀ երկաթուղային և ջրային ուղիների մեծ հնարավորությունից, կազմակերպել սահմանային առևտուր: Նշվեց, որ մարզերը միմյանց համար կարող են տարանցիկ գոտի հանդիսանալայլ շուկաներ դուրս գալու համար:

Նոյեմբերի 1-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետը ընդունեց ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզպետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի առաջին տեղակալ Դենիս Չիրկովին և Նիժնի Նովգորոդի հայկական համայնքի ղեկավարի տեղակալ Անի Մխիթարյանին: Տեղեկացնենք, որ Նիժնի Նովգորոդի և Վայոց ձորի մարզերի միջև սերտ համագործակցությունն է ծավալվում: 2011 թվականին ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Նիժնի Նովգորոդի մարզերի միջև ստորագրվել է առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային բնագավառներում համագործակցության համաձայնագիր:
Հավելենք, որ Նիժնի Նովգորոդի մարզի պատվիրակությունը Վայոց ձորի մարզ է այցելել Հայ-ռուսական միջտարածաշրջանային 4-րդ ֆորումի շրջանակներում, որը կանցկացվի նոյեմբերի 2-3 Երևանում:

Նոյեմբերի 2-ին ՌԴ Արխանգելսկի մարզի պատվիրակությունը, Արխանգելսկի մարզի նահանգապետ Իգոր Օռլովի գլխավորությամբ, ՀՀ Վայոց ձորի մարզում էր: Ռուսական պատվիրակության մեջ ընդկրգված էր նաև Արխանգելսկի նահանգի պատգամավորների մարզային ժողովի նախագահ Վիկտոր Նովոժիլովը և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Արխանգելսի նահանգի պատվիրակությունը Հայաստան է ժամանել 4-րդ հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի շրջանակներում:
Պատվիրակությունը այցելեց Մալիշկայի համայնք: Գյուղի Սբ. Աննա եկեղեցու բակում տեղի ունեցավ ուղղափառ խաչի բացման հանդիսավոր արարողություն: Տեղեկացնենք, որ Արխանգելսկ քաղաքում տեղի իշխանությունների նախաձեռնությամբ Սբ. Աստվածածին ուղղափառ եկեղեցու բակում տեղադրվել է հայկական խաչքար:
Այնուհետև պատվիրակությունն այցելեց Մալիշկայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց: Նշենք, որ դպրոցը 2013 թվականից կրում է ռուս ականավոր և աշխարհահռչակ գիտնականի անունը: Անվանակոչումն իրագործվել է ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Արխանգելսկի մարզերի միջև Առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության 2012թ. համաձայնագրի շրջանակներում:
Նոյեմբերի 3-ին Երևանում անցկացված 4-րդ հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի և ՌԴ Արխանգելսկի նահանգի միջև ստորագրվեց Առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության համաձայնագրի իրագործման 2015-2017 թթ. միջոցառումների ծրագիրը: 2015 թվականի փետրվար ամսին ՀՀ Վայոց ձորի մարզ այցելեցին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի անդամները: Գործարարների հետ քննարկվեցին Վայոց ձորում արտադրվող գինիները Բելառուս արտահանելու հնարավորությունները: Ռուսաստանի Դաշնության Արխանգելսկի մարզի կառավարության և Հայաստանի Հանրապետության Վայոց

ձորի մարզպետարանի միջև ստորագրվեց առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին համաձայնագրի 2015-2017թ.թ. միջոցառումների իրականացման ծրագրի շրջանակներում ս/թ հունիսի 25-ից հուլիսի 2-ը՝ փոխադարձ այցով Վայոց ձորի մարզում են Արխանգելսկի մարզի մանկատան 13-16 տարեկան թվով 10 սաներ՝ խմբի ղեկավարի ուղեկցությամբ: Մանկատան սաները հիմնականում իրենց հանգիստն անցկանելու են Ջերմուկ առողջարանային քաղաքի ,,Արարատ,, մոր և մանկան առողջարանում: Երեխաների ակտիվ հանգիստը լավագույնս կազմակերպելու համար նախապատրաստվել է հատուկ օրակարգ: Ըստ օրակարգի երեխաները յուրաքանչյուր օր առավոտյան և երեկոյան այցելում են Ջերմուկ քաղաքի հայտնի հանքային ջրերի ըմպելասրահ: Երեխաների համար կազմակերպվում են դիստոկետներ, անցկացվել է վոլեյբոլի մրցույթ, կազմակերպվելու են շրջայցեր Ջերմուկի տեսարժան վայրեր: Այցի շրջանակներում մանկատան սաները այցելելու են նաև մարզկենտրոն Եղեգնաձոր և Մալիշկայի համայնք: Բացի ակտիվ հանգստից երեխաներն այցի ողջ ընթացքում ,,Արարատ,, մոր և մանկան առողջարանում անցնելու են համապատասխան բուժման կուրսեր: Տեղեկացնենք, որ ս/թ ապրիլի 22-30-ը, համագործակցության համաձայնագրի շրջանակներում, Վայոց ձորի Մալիշկա համայնքի թիվ 2 դպրոցի 12-17 տարեկան թվով 9 աշակերտներ 2 ուսուցիչների ուղեկցությամբ այցելել են Արխանգելսկի մարզ:

<u>Քաղաքաշինություն</u>

2016-2018 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրագրերի հետ կապված քննարկումներ ենք անցկացրել և կատարել համապատասխան ճշտումներ ՀՀ քաղաքաշինության և ՀՀ էներգետիկայի ու բնական պաշարների նախարարությունների հետ:

2015-2018 թթ. քաղաքաշինության բնագավառում քառամյա զարգացման ծրագրի հաստատման հետ կապված աշխատանքներ ենք տարել մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծությունների բաժնի ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան վարչությունների հետ:

Աշխատանքներ ենք տարել ՀՀ պետական բյուջեով իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերով իրականացվող օբյեկտների ընտրության, փաստաթղթերի հավաքագրման, համայնք-կազմակերպություն համագործա-կցության գործում:

Ներկայացրել ենք 193.5 մլն.դրամի շրջանակներում նախագծա-նախահաշվային փաստաթղթեր ունեցող օբյեկտների ցանկ, որպես համայնքների առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիր 2015թ-ին ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներով իրականացնելու (հրատապ ծրագրով):

Ներկայացրել ենք 500,0 մլն. դրամի շրջանակներում մարզի համայնքների առաջնահերթ լուծում պահանջվող օբյեկտների ցանկ 2016 թվականի ՀՀ պետական բյուջեով իրականացնելու համար:

Խնձորուտ գյուղի դպրոցի ճաշարանի հիմնանորոգման և << Կայուն սնունդ>> ծրագրի իրականացման համար պատվիրվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթեր և համապատասխան գրությամբ ներկայացրել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ կառավարության որոշման նախագիծ նախապատրաստելու համար:

ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 834 - Ն որոշմամբ Զառիթափ համայնքի ոռոգման ջրագծի կառուցման համար նախատեսված 27640,00 հազ. դրամից մնացորդային **16440.0 հազ. դրամ** գումարը, համաձայն ՀՀ կառավարության 05.03.2015թ-ի № 198-Ա որոշմամբ իրականացվել է մինչև 2015թ-ի մայիսի 20-ը : Ջրագիծը հանձնվել է շահագործման սահմանված ժամկետում:

ՀՀ կառավարության 2015 թվականի 02 հուլիսի N 766 -Ն որոշումով մարզի համայնքների առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով հատկացվել է 300 000,0 հազ. դրամ

Այդ թվում՝

h/h	**Օբյեկտի անվանումը**	**Ընդամենը հազ. դրամ**
1.	**Եղեգնաձոր քաղաքի բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում «8 շենք»**	**30466.0**
2.	**Վայք քաղաքի բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում «8**	**32332,8**

	շենք»	
3.	**Ջերմուկ քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում «2 շենք»**	**29563,2**
4.	**Վայոց ձորի մարզպետարանի շենքի սան. հանգույցների վերանորոգում**	**6770,2**
5.	**Ջերմուկ քաղաքային համայնքի պատկերասրահի ջեռուցման համակարգի կառուցում**	**6398,1**
6.	**Եղեգնաձոր քաղաքի թիվ 2 մանկապարտեզի խոհանոցի և սան. հանգույցների հիմնանորոգում**	**5555,3**
7.	**Հորս համայնքի մշակույթի տան վերանորոգում**	**14227,786**
8.	**Գետափ համայնքի մանկապարտեզի վերանորոգում և ցանկապատի կառուցում**	**20122,0**
9.	**Գնիշիկ համայնքի խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի վնասված հատվածի վերականգնում**	**15111,6**
10.	**Թառաթումբ համայնքի խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի վնասված հատվածի վերականգում**	**11348,4**
11.	**Չիվա համայնքի դպրոցի և հարակից թաղամասի կոյուղագծի և մաքրման հորի կառուցում**	**15550,0**
	Ընդամենը	**187445,386**

Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին

Մալիշկա, Փոռ, Զառիթափ, Ռինդ, Ելփին, Վերնաշեն, Արինի, Ազատեկ, Հերհեր համայնքներին «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացված և իրականացվելիք աշխատանքների գազիֆիկացման, ոռոգման և խմելու ջրագծերի հիմնանորոգման համաֆինանսավորման նպատակով հատկացվել է 55000.0 հազ. դրամ:

Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին

Եղեգնաձոր քաղաքի թիվ 1, թիվ 2, թիվ 5, Վայք քաղաքի թիվ 1, թիվ 2, Ագարակաձոր, Արփի, Աղավնաձոր, Գետափ, Մալիշկայի թիվ 1, թիվ 2 մանկապարտեզների, սանհանգույցների և խոհանոցների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերման նպատակով հատկացվել է 28180.0 հազ. դրամ:

Ընթացիկ դրամաշնորհներ

Կարկտահարված Աղավնաձոր, Ռինդ, Չիվա համայնքներին հողի հարկի փոխհատուցման համար հատկացվել է 1620.2 հազ. դրամ:

Կարկտահարված Աղավնաձոր, Ռինդ և Չիվա համայնքների ոռոգման ջրի գումարի փոխհատուցման նպատակով «Եղեգնաձոր» ՋՕԸ-ին պետական աջակցություն է տրամադրվել 8969.7 հազ. դրամ:

Ընթացիկ դրամաշնորհներ՝ **10 589,9** հազ. դրամ

Մրցույթների արդյունքում տնտեսվել է **18 711,0 հազ. դրամ**, որը տրամադրվել է -Գետափ համայնքի շրջանցիկ ճանապարհի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների կազմման համար -3900,0 հազ.դրամ գումար :
-Վայք քաղաքային համայնքի << Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորություն>> ծրագրի փոխհատուցման նպատակով -13341,0 հազ. դրամ:
-Վայոց ձորի մարզի կարկատահարված Գետափ և Եղեգնաձոր համայնքների ոռոգման ջրի գումարի փոխատուցման նպատակով- 1 470,0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 18.06.2015թ. № 673-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից՝

Ջերմուկ քաղաքի Արփայի կիրճի հետիոտն ճեմուղու վերականգման բարեկարգման շինարարական աշխատանքների համար հատկացված 157 666.0 հազ. դրամ գումարից 2015 թվականին իրականացվել է **23097,0 հազ. դրամի** նախագծման և շինմոնտաժային աշխատանքներ (աշխատանքներն ընթացքի մեջ են):

ՀՀ կառավարության 18.08.2015թ. № 955-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 120 000.0 հազ. դրամ հատկացվել է Վայք քաղաքի <<Արևիկ>> մարզադաշտի հիմնանորոգման և այգու բարեկարգման աշխատանքների համար:Աշխատանքները գտնվում են մրցույթային փուլում:

-Գյուղական համայնքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկության միջոցներով մարզի Մալիշկա,Գետափ,Արփի Զառիթափ և Փոռ համայնքներում իրականացվել է գազիֆիկացման ընդլայնում : Վերը նշված բոլոր համայնքներում աշխատանքներն ավարտված են, բացառությամբ Մալիշկա գյուղի գազիֆիկացումը (կատարվել 85%, կամ մնում է կատարելու 55 000 հազ. դրամի շինմոնտաժային աշխատանքներ) կատարվել է ընդամենը **459 845.71 հազ. դրամ**:
Գլաձոր համայնքի խմելու ջրատարի կառուցման համար- **375 955.0 հազ.դրամ** Ագարակաձոր համայնքի ոռոգման ջրատարի հիմնանորոգման համար **-64 706.0 հազ. դրամ** և Ռինդ համայնքի ոռոգման ջրատարի հիմնանորոգման համար-**51 002.0 հազ. դրամ :**

Նախատեսվում է իրականացնել Արենի, Վերնաշեն, Գետափ, Ելփին, Արին, Ազատեկ համայնքներում ոռոգման ջրագծերի և Ռինդ համայնքի խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ՝ 833164.48 հազ. դրամ գումարով (աշխատանքներն ընթացքի մեջ են):

-Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) միջոցներով կիրակացվի Զառիթափի մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը՝145 000 .0 հազ. դրամով:Մրցույթը կայացել է, աշխատանքներն ընթացքի մեջ են:

<u>Այլ ներդրումային ծրագրերով իրականացվել են</u>

-Ասիական զարգացման բանկի միջոցներով
Ջերմուկ, Վայք և Զառիթափ համայնքներում իրականացվում է ջրամատակարարման բարելավման աշխատանքներ 635 500.0 հազ.դրամի, այդ թվում՝ Ջերմուկ քաղաքում 141 000 հազ.դրամից՝ 2014 թվականին 69 000 հազ. դրամի , 2015 թ-ին կատարվել է 41000.0 հազ. դրամ, մնացորդային գումարը 2016 թվականին կազմում է 31 000 .0 հազ դրամ, Վայք քաղաքում 305 000.0 հազ. դրամից՝ 2014 թվականին 50 000 հազ. դրամի , 2015 թ-ին կատարվել է 228 000.0 հազ. դրամ, մնացորդային գումարը 2016 թվականին կազմում է 27 000 .0 հազ դրամ, և Զառիթափ համայնքի խմելու ջրի և ՕԿՋ-ի հիմնանորոգման համար 189 500.0հազ. դրամից 2014 թվականին 76 000 հազ. դրամի , 2015 թ-ին կատարվել է 104 000.0 հազ. դրամ, մնացորդային գումարը 2016 թվականին կազմում է 9 500 .0 հազ դրամ :

Ընդամենը 2015 թվականի համար կատարված է **372 500.0 հազ. դրամ**
-Վերակառուցման զարգացման բանկի միջոցների հաշվին Ջերմուկ քաղաքում կառուցվել է կեղտաջրերի մաքրման կայան, որի արժեքը2015 թվականին կազմել է **115 202 հազ.դրամ**, և վերանորոգվել է կոյուղագիծը, որի արժեքը կազմել է **292,290 հազ. դրամ :**

-«Վիվա-Սել» ՄՏՍ–ի բարեգործությամբ իրականացվել է մարզի սահմանամերձ Խաչիկ գյուղում 3 առանձնատան կառուցման աշխատանքներ 10 500 հազ.դրամի և 2 առանձնատան հիմնանորոգում 2 000 հազ.դրամ:Խնձորուտ , Գնիշիկ, բարձրունի և Գոմք համայնքներում իրականացվել է փողոցային լուսավորություն:
Ընդամենը -**55 500 հազ. դրամ** :
-«Ապավեն համայնքներին» ԲՀԿ-ի միջոցներով մարզի 8 համայնքներում, այդ թվում Ելփին, Չիվա, Արենի, Խաչիկ, Արփի, Արտաբույնք, Հորբատեղ և Ագարակաձոր իրականացվել է փոքրաձավալ շինարարական աշխատանքներ **31 377.0 հազ. դրամի,** ներառյալ համայնքների կողմից կատարվող համաֆինանսավորումը:
-Իրականացվում է փոքրաձավալ շինարարական աշխատանքներ իրականացնել նաև **«Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ –ի միջոցների հաշվին** Արփի համայնքում կառուցվում է մրգի սառնարան, Շատին համայնքում կատարվում է 4 առանձնատների տանիքների հիմնանորոգում: Ելփին և Ռինդ համայնքներում ոռոգման ջրագծերի կառուցման, Զառիթափ ևԳնդևազ համայնքներում կաթի ընդունման կետի կառուցման,

իսկ Թառաթումբ համայնքում անասունների համար խմոցի կառուցման աշխատանքներ-**77 950.0 հազ. դրամ:**

-**«Բնության համաշխարհային հիմնադրամ Հայաստանյան մասնաճյուղ» ԱՍ-ի միջոցներով** Խաչիկ և Մոզրով համայնքներում իրականացվել է առկա խմելու ջրի մատակարարման և ոռոգման համակարգերի վերակառուցման աշխատանքներ **-16 600.0 հազ. դրամ**

- **ՄԱԿ-ի էկոլոգիական համակարգերի բարելավման փոքր դրամաշնորհային ծրագրի միջոցներով** կատարվել է Սալլի համայնքի ոռոգման ջրագծի վերակառուցում-**4 000.0 հազ. դրամ:**

-**«Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի միջոցներով** մարզի Աղնջաձոր, Թառաթումբ, Հորս, Վերնաշեն, Զառիթափ, Հերհեր և Մարտիրոս համայնքներում իրականացվել է խմելու ջրի վերակառուցման աշխատանքներ-**37 760.0 հազ. դրամ**

-Համաշխարհային բանկի միջոցներով Ջերմուկ քաղաքում իրականացվել է փողոցային լուսավորություն-**25 700.0 հազ. դրամ:**

- ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջոցներով Հորբատեղ համայնքում կառուցվել է պասիվ արևային ջերմոց-**18 700. հազ. դրամ:**

-Առողջապահության ԾԻԳ-ի միջոցներով Շատին համայնքում կառուցվել է բշկական ամբուլատորիայի նոր շենք -**64 000.0 հազ. դրամ:**

-Համայնքային բյուջեով Եղեգնաձոր քաղաքում կատարվել է Սևակի 3 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում, Արենի համայնքում ներհամայնքային ճանապարհի բարեկարգում, Շատին համայնքում փողոցային լուսավորության անցկացում, իսկ Արփի համայնքում համայնքային կենտրոնի տանիքի մասնակի նորոգման աշխատանքեր: Սարավան համայնքում հիմնանորոգվում է մշակույթի տունը-**351 480 .0 հազ դրամ:**

Ընդամենը 2015 թվականին մարզում իրականացված շինարարական աշխատանքները կազմում է 2 754 104.7 հազ. դրամ

<u>Ճարտարապետության բնագավառ</u>

2015 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազ և Սարավան համայնքների գլխավոր հատակագծերի առաջադրանքները և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ 42-առաջարկություններ համաձայնեցման է ներկայացվել ՀՀ քաղաքաշինության նախարարություն և նշված բոլոր առաջարկությունները համաձայնեցվել են :
Վայք քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված 0.71 հա անհատական բնակելի կառուցապատման նպատակային նշանակության փոփոխումը գյուղատնտեսական նշանակության և ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի № 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 46-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն Արենի գյուղական համայնքի գլխավոր հատակագծի փոփոխության առաջարկությունը (0.24401 հա մակերեսով ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանող հողամասի նպատակային նշանակության փոփոխություն) համաձայնեցվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության միջգերատեսչական հանձնաժողովի կողմից

Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2015թ. ապրիլի 9-ի № 78 հրամանի ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության հանձնախումբը 2015թ. հունիսի 1-ից-5-ը ներառյալ տեսչական ստուգում է անցկացվել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունում և քաղաքաշինական գործունեություն իրականացնող այլ ծառայություններում:
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2015 թ. մայիսի 14-ի № 45 հրամանով, մարզի տարածքում ՀՀ տարածքային կառավարման նախարարի և ՀՀ քաղաքաշինության նախարարի համատեղ հրամանով հաստատված հարցաշարերի միջոցով քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ վարչական հսկողություն իրականացնելու նպատակով, ստեղծվել է հանձնաժողով և վարչական

հսկողություն է իրականացվել մարզի 44 համայնքներից 29-ում, ինչը ավել շատ է քան վերը նշված օրենսդրական ակտերով սահմանված քանակը (առնվազը համայնքների 33 տոկոսը) և նշված վարչական հսկողության հիման վրա կազմված արձանագրությունները քննարկվել է մարզպետի մոտ, իսկ արձանագրված բացթողումները վերացնելու ուղղությամբ առաջարկվող տարբերակները ուղարկվել է համայնքների ղեկավարներին::
Ինքնակամ շինարարության կանխարգելման, կասեցման և հետևանքների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների ընթացքում նշանակվել են տուգանքներ Եղեգնաձոր քաղաքում 400.000 դրամ, իսկ Ագարակաձոր գյուղում 100.000 դրամ չափով:
Պլանային ստուգման արդյունքում կազմված արձանագրությունների մեկ օրինակը 7-օրյա ժամկետում տրվել է ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության վայոց ձորի տարածքային ստորաբաժանմանը և առաջարկվել է համատեղ աշխատանքներ իրականացնել մարզի տարածքում քաղաքաշինության բնագավառի գործունեությունը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ::

2015 թվականի ընթացքում աջակցել ենք Գնդեվազ և Սարավան համայնքների ղեկավարներին գլխավոր հատակագծերի նախագծման առաջադրանքի նախագիծը ՀՀ քաղաքաշինության նախարարություն ուղարկելու աշխատանքներին կցելով գլխավոր հատակագծի մշակման համար անհրաժեշտ՝ համայնքում առկա ելակետային նյութերի ցանկը:
Նշված երկու համայնքների կողմից ներկայացված առաջադրանքները 2015 թվականի ընթացքում հաստատվել են, իսկ Աղավնաձոր, Զառիթափ, Գլաձոր, Արփի, Շատին և Գետափ համայնքները ունեն գլխավոր հատակագծերի հաստատված առաջադրանքներ և առաջարկվել է << Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատվիրել քաղաքաշինական փաստաթղթերի մշակման աշխատանքներ:

2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թ. դեկտեմբերի 22-ի № 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ 39 առաջարկություններ և հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ, որոնք ել սահմանված կարգով փոխանցվել է համայնքների ղեկավարներին:
<< բազմաբնակարան շենքերի կառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը քննարկվել է մարզպետարանում և համաձայնեցման վերաբերյալ նախատեսված ժամկետում ներկայացվել է առաջարկություն:

Մեկ տարվա ընթացքում մարզպետարանում ստացվել է կառուցապատման նպատակով տրված թվով 94 հատ շինարարության թույլտվություն, 31 հատ ավարտական ակտ, 5 հատ քանդման թույլտվություն:

ՀՀ համայնքներում (բնակավայրերում) բնակելի կառուցապատման օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը տրամադրվել է մարզի բոլոր համայնքներին և 2015 թվականի ընթացքում այդ նախագծերով բնակելի տներ են կառուցում 7 համայնքներում թվով 12 ընտանիքներ:

Մարզի համայնքներին է տրամադրվել և պարզաբանվել <<հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> ՀՀ օրենքը և կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի № 1910-Ն որոշումը և ամենօրյա աշխատանքներ է տարվում առկա գերեզմանատների տարածքների օգտագործման և պահպանման նկատմամբ:

<u>Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ</u>

2015թ-ի ընթացքում շարունակվել է ՀՀ կառավարությանն առընթեր «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի հետ համագործակցությունը, որի արդյունքում ավարտվել են Գետափ, Փոռ, Զառիթափ և Արփի համայնքների գազիֆիկացման ընդլայնման աշխատանքները, իսկ Մալիշկա համայնքում աշխատանքների ավարտը նախատեսված է 2016թ-ին:

2015թ-ին նույն ծրագրի շրջանակներում իրականացվել և ավարտվել են Գլաձոր համայնքի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգման և Ագարակաձոր, Ռինդ համայնքների ոռոգման ջրագծերի վերակառուցման աշխատանքները: Մարզի մի շարք համայնքներում (Արենի,Վերնաշեն, Գետափ, Ելփին, Արին, Ազատեկ, Ռինդ) սկսվել են խմելու ջրի և ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքները, որոնք կավարտվեն 2016թ-ի ընթացքում: Ծրագրերի շարունակությունը ապահովելու համար դիմել ենք համայնքի

ղեկավարներին համաֆինանսավորման համար կայացնել համապատասխան որոշումներ, որոնք ներկայացվել են ՀՀԿԱ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ի տնօրինությանը:

ՈՒսումնասիրվել և քննարկվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից բնակչությանը տրվող խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքները:

Առաջարկվել է համայքի ղեկավարներին անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար պայմանագրեր կնքել ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի հետ:

2015թ-ի ընթացքում մարզում խմելու ջրի հետ կապված բռնկումներ չեն արձանագրվել:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Հարավային տարածքային մասնաճյուղի կողմից նախատեսված 209 312.84 հազ. դրամից հավաքագրվել է 212 092.21 հազ. դրամ, որը կազմում է 101.3 %:

«Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների թիվը ավելացել է 66-ով, որից 10 բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, իսկ 56 անհատական տներ: Անվտանգության ապահովման համար տեղադրվել է 66 անվտանգության համակարգ:

Մարզի 3 քաղաքներում կոմունալ ծառայությունների համար նախատեսված 73942.0 հազ. դրամից հավաքագրվել է 70007.14 հազ. դրամը, որը կազմում է 94.7%-ը:

Մարզի 3 քաղաքային և 41 գյուղական համայնքների ղեկավարների հետ համագործակցելով հավաքագրվել են համայնքներում առկա հիմնախնդիրները, որոնք պարբերաբար թարմացվում են:

Տրանսպորտ և ճանապարհաշինություն

2015թ. ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել էր 312.7 մլն դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է 267.7 կմ ճանապարհների ձմեռային պահպանության և նույն նշանակության 187.9 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ, իսկ մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել էր 68.7 մլն. դրամ գումար: 2015թ. ընթացքում նշված ծրագրի շրջանակներում մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա իրականացվել է 118.7 կմ ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 33.1 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ:

2015թ. կազմվել և ներկայացվել է 2016 – 2018թթ. մարզային /տեղական/ և համայնքային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, ինչպես նաև ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտը: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում ներկայացվել և քննարկվել է հիմնանորոգման ենթակա ավտոճանապարհները ըստ առաջնահերթության:

Վերահսկվել է մարզում վերանորոգվող ավտոճանապարհների աշխատանքների կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում շինարարական կազմակերպություններին ցուցաբերվել է աջակցություն:

2015թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ ՀՀ Վայոց ձորի մարզում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Մ-2 – Չիվա- Ռինդ ճանապարհի հիմնանորոգում - 99.5 մլն. դրամ
2. Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 139 + 050 /37մ/ փլուզված հատվածի վերականգնում - 99.9մլն. դրամ
3. Գետափ համայնքի ճանապարհի հիմնանորոգում – 20 մլն. դրամ

Ֆինանսավորման բոլոր աղբյուրների գծով 2015թ. մարզում ընդհանուր օգատագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ/ հիմանանորոգման, վերանորոգման, ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումները կազմում են 600.8 մլն դրամ:

Չնայած նախորդ տարիներում կատարված աշխատանքներին դեռևս կան ավտոճանապարհներ Մ2 - Կարմաշեն, Մ2 - Արտավան, Հ42 – Զառիթափ – Գոմք - Կապույտ, Մ2 - Արին, Սերս-Բարձրունի, Մ2 - Զեդեա, Տ-9-21 - Հորբատեղ, Մ2 - Գետափ, Հերմոն - Վարդահովիտ, Հերմոն – Գողթանիկ և Մ2 - Մոզրով, որոնք գտնվում են անբարեկարգ վիճակում:

Մարզի տարածքում միջհամայնքային ուղևորափոխադրումները իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմաբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների միջոցով, մրցութային կարգով:

,,Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի մատուցման,, ծրագրով կազմակերպվել է 13 երթուղիներում մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխման աշխատանքներ:

Մշտական հսկողություն է իրականացվել էլ.ցանցերի, կապի, հեռուստատեսության և ,,Հայփոստի,, բնագավառներում կազմակերպությունների կողմից բնակչության սպասարկման որակի բարելավման ուղղությամբ:

Մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է համատեղ հանձնաժողով /էլ.ցանցերի և կադաստրի ներկայացուցիչներից/ էլ. հաղորդման գծերի անվտանգության գոտիներում կառուցված շենք-շինություններ խախտումների ուղղությամբ, կատարվել է գույքագրում: Այժմ աշխատանքներ են տարվում նմանատիպ խախտումներ թույլ չտալու և այն վերացնելու համար:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Իրագործվել է բնակչության պետական սոցիալական ապահովության ծրագրերը, կազմակերպել է մարզային ենթակայության սոցիալական ապահովության հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը, նպաստել է բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծմանը, համագործակցել մարզում սոցիալական ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ, համակարգել նրանց գործունեությունը :

Սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության իրականացման ընթացքում ուշադրության կենտրոնում են կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանինք, բազմազավակ ընտանիքները, պատերազմի վետերանները, զոհված ազատամարտիկների ընտանիքները, տարեցները և հաշմանդամները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, անտուն և անօթևան ընտանիքների սոցիալական պաշտպանության խնդիրները:

2015թ. զգալի աշխատանքներ են իրականացվել պետական նպաստների նշանակման ու վճարման գործընթացի բարելավման ուղղությամբ, յուրաքանչյուր ամիս մարզի ՍԱՏԳ ներից հավաքագրվել է հաշվետվություններ, որոնք ամփոփվել և տեղադրվել են մարզպետարանի կայքում:

Ամեն ամիս ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ և եռամսյակային դրամական օգնություն ստացողների ցուցակները տեղադրվել են մարզպետարանի և համայնքների կայքէջերում:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում փաստագրվել են 2752 ընտանիքներ, որից նպաստառու 2018

Եղեգնաձորի տարածաշրջան 1900 ընտանիք, որից նպաստառու են դարձել 1405_ը
Վայքի տարածաշրջան 533 ընտանիք նպաստառու՝ 396
Ջերմուկի տարածաշրջան 319 ընտանիք 217

Մարզի 3 ՍԾՏԳ ների կողմից 2015 թվականին կատարվել են հետևյալ աշխատանքները.

Պետական նպաստներ 2015 թվական տարեկան /ցուցակային/

Ցուցանիշներ	Եղեգնաձորի ՍԾՏԳ		Վայքի ՍԾՏԳ		Ջերմուկի ՍԾՏԳ		Ընդամենը մարզում	
	ընտանիք	գումարը	ընտանիք	գումարը	ընտանիք	գումարը	ընտանիք	գումարը
Ընտանեկան նպաստ	1075	404969000	302	115831500	151	57560000	1528	578360500

Սոցիալական նպաստ	330	66691000	94	19499000	66	14025000	490	100215000
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ	26	31662000	76	17748000	34	7812000	236	57222000
Միանվագ օգնություններ								
Երեխայի ծննդյան միանվագ օգնություն	63	3150000	13	650000	8	400000	84	4200000
Երեխայի առաջին դասարան հաճախելու միանվագ օգնություն	130	3250000	32	800000	27	675000	189	4725000
Ընտանիքի անդամի մահվան դեպքում	2	100000	1	50000	0	0	3	150000
Հրատապ եռամսյակային օգնություն	475	24219000	149	7650000	73	3825000	697	35694000
Ավանդ								
Ավանդ	155	263823330	111	19666205	10	2028759	276	48077294
Փաստագրված ընտանիքիներ								
Փաստագրված	1900		533		319		2752	

Շարունակվում է ավանդների փոխհատուցման աշխատանքները 2015թվականին ավանդի փոխհատուցում է տրվել 276 քաղաքացու:

Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացված միջոցների հասցեականության ապահովման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Պարբերաբար իրականացվել են հարակից բազաներից ստացվող տեղեկատվությունների և տեղական տեղեկատվական բազաների համադրման, մասնագետների տնային այցելությունների միջոցով ընտանիքների սոցիալական վիճակի ուսումնասիրությունների գործառույթներ, որոնք որոշակիորեն նպաստել են ընտանեկան նպաստների հասցեականության և սպասարկման որակի բարելավմանը:

Տեղեկատվական բազաների համադրմամբ և կատարված ուսումնասիրությունների արձանագրված գերավճար գումարները սահմանված կարգով հետ է գանձվել պետական բյուջե:

2015թվական

	հետգանձման ենթակա	փաստացի հետգանձված /հազ,դրամ/	Մնացորդ
Եղեգնաձորի ՍԾՏՄ	1267.0	845.5	421.5
Վայքի ՍԾՏՄ	325.5	93.0	232.5
Վայոց ձորի մարզ	1592.5	938.5	654.0

Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններին կից գործել են հասարակական հիմունքներով գործող սոցիալական աջակցության խորհուրդները, որոնք համապատասխան որոշումներով

ընտանեկան նպաստի համակարգից դուրս մնացած սոցիալապես անապահով 697 ընտանիքների նշանակվել են եռամսյակային դրամական օգնություն:
Մարզի ՍԱՏԳ ներում տեղադրվել է առաջարկությունների և բողոքների արկղեր: Յուրաքանչյուր եռամսյակ և ըստ անհրաժեշտության բողոքների և առաջարկությունների արկղերը բացելու, առաջարկությունները վերլուծելու, բողոքները ուսումնասիրելու և ընթացիկ խնդիրներին լուծումներ տալու համար որպես աշխատանքնային խմբի անդամ է նշանակվել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետը:
Ընտանեկան նպաստի համակարգի կատարելագործման, հասցեականության բարձրացման համար ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում գործում է թեժ գիծ՝ 028123281 հեռախոսահամարով: Թեժ գծի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջում: Հեռախոսահահամարը փակցվել է նաև մարզի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների առաջարկությունների և բողոքների արկղերի վրա, ինչպես նաև տեսանելի այլ վայրերում:
Մարզի երեք զբաղվածության տարածքային կենտրոններում 2015թ. գրանցվել են 1118 գործազուրկներ, աշխատանքի են տեղավորվել 351 մարդ:
Մարզի զբաղվածության 3 կենտրոնների կողմից պետական ծրագրերի կատարման ընթացքը 2015թվականին

Ծրագրերի անվանումը		Ծրագրում ընդգրկվածների թիվը տարեսկզբից	
		ընդ. (մարդ)	այդ թվում՝ կին
Ա	Բ	1	2
Գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում	01	5	0
այդ թվում՝ անմրցունակ անձինք	02	1	0
նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձինք	03	0	0
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում	04	5	2
նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձինք	05	2	1
Ձեռքբերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակ-ցության տրամադրում	06	26	23
այդ թվում՝ անմրցունակ անձինք	07	25	22
նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձինք	08	0	0
Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում	09	0	0
նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձինք	10	0	0
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում	11	41	35
նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձինք	12	2	2
Աշխ.շուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում՝ (14+16)	13	46	32
ա/Հաշմանդամություն ունեցող գործազուրկների աշխատատեղի հարմարեցման համար միանվագ փոխհատուցում գործատուին	14	0	0
այդ թվում՝ տեսողական խնդիրներ ունեցող	15	0	0

անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռք բերման և աշխատատեղի հարմարեցման համար փոխհատուցում			
բ/Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակություն-ների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուի	16	46	32
նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձինք	17	1	0
Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործա-տուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում	18	22	17
նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձինք	19	3	3
18 տողից՝ ուղեկցող անձանց թիվը	20	0	0
Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում*	21	27	24
այդ թվում՝ անմրցունակ անձինք	22	27	24
նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձինք	23	1	1
21-տողից՝աշխատանքից ազատման ռիսկ ունեցող անձ	24	0	0
Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղ/տնտեսություններին աջակցության տրամադրում, որից՝	25/1	273	54
հաշմանդամներ		45	15
Ընդամենը ծրագրերում ընդգրկվածներ	25	445	187

2015 թվականի հոկտեմբերին Եղեգնաձորի քաղաքում կազմակերպվեց աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցեցին 29 գործատուներ ներկայացնելով 110 առկա և շուրջ 240 սպասվելիք թափուր աշխատատեղ:Տոնավաճառին մասնակցեցին աշխատանք փնտրողները շուրջ 600 մարդ:

Մարզում ապրում են 4276 հաշմանդամություն ունեցող անձինք ,որից 121 մանկուց հաշմանդամություն ունեցող անձինք ,156 1-ին խմբի ,1647 2-րդ խմբի և 2352 –ը 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք են :

84 հաշմանդամություն ունեցող անձանց հատկացվել է առողջարանային վերականգնողական ուղեգրեր:

Միջոցառումներ են ձեռնարկվել տրանսպորտի, սոցիալական ենթակառուցվածքների օբյեկտները և բնակելի շենքերը հարմարեցնելու հաշմանդամների պահանջներին: Հաշվետու շամանակաշրջանում 10 թեքահարթակներ են կառուցվել մարզի քաղաքային համայնքներում, հատկապես մեծ ուշադրություն է դարձվում նոր կառուցվող շինությունների նկատմամբ:

Հայրենական պատերազմի 23 վետերանների , Արցախյան Ազատամարտի զոհվածների և հաշմանդամների ընտանիքներին Նոր տարվա և Մայիսի 9-ի կապակցությամբ մարզպետարանի կողմից տրվել է դրամական աջակցություն,կազմակերպվել է համերգ և տոնական այլ միջոցառումներ:

2015թ. ընթացքում տեղի է ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Վայոց ձորի մարզային հանձնաժողովի 4 նիստ, որտեղ քննարկվել են մարզի հաշմանդամների հիմնախնդիրներին վերաբերվող հարցեր:

Վարչության ուշադրության կենտրոնում են նաև տարեց մարդիկ:Հոկտեմբերի 1-ին Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ այցելություններ են կազամկերպվել 100 և ավելի բարձր տարիք ունեցող 5 տարեցների և տրվել է դրամական օգնություն:

Հունիսին կազմակերպվել է հանդիպում <<Անհայտ կորած ազատամարտիկի օրվա>> կապակցությամբ ՝ մարզի 7 անհայտ կորած ազատամարտիկների ծնողներին տրվել է դրամական օգնություն:

Մարզի երեք ՍԱՏԲ-ներում հաշվառված են 9919 կենսաթոշակառուներ, ամսեկան միջին կենսաթոշակի չափը կազմել է 38.0 հազ. դրամ :

ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 9-ի N 947-Ն զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքներին <<Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին>> որոշմամբ բնակարանի կարիք ունեցող ընտանիքների ցուցակները ներկայացվել են ՀՀ ՊՆ: Հերթագրված է 46 զինծառայող :Նախորդ տարիներին բնակարանի համար փոխհատուցում է տրվել 50 ազատամարտիկների ընտանիքների:

Վարչությունը համագործակցում է սոցիալական ոլորտում ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ:

Կարևորվել է մարզում իրականացվող սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը, պետական նպաստների համակարգի, հաշմանդամների հիմնախնդիրների, սոցիալական պաշտպանության ոլորտի այլ իրավական ակտերի լուսաբանումը: 2015թվականի ընթացքում բազմաթիվ նյութեր են հրապարակվել մարզպետարանի պաշտոնական կայքում և <<Վարդաձոր>> թերթում :

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2015թ. գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար նախատեսված է **605 227,8 հազ . դրամ** գումար:

Մարզի հիվանդանոցային բժշկական օգնություն իրականացնող ընկերություններում կատարվել են 38870.9 հազ. դրամի վճարովի բժշկական ծառայություններ, որից 4555.0 հազ. դրամը համավճարի հիմունքներով:

Մարզպետի կողմից պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել մարզի 36 քաղաքացիներ: Ապահովվել է հատուկ հիվանդություններով տառապող անձանց անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրումը, ինչպես նաև սոցիալական խմբերում ընդգրկված անձանց անվճար բուժ.ծառայություններ են մատուցվել մարզի բնակչությանը:

Մարզում իմունականխարգելման աշխատաքները պատվաստման տարբեր տեսակների գծով և նրանց ընդգրկվածությունը կազմում է 95%:

Ավարտին է մոտենում <<Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա>> ՊՈԱԿ-ի նոր շենքի կառուցումը, որի համար ՀԲ-ի և ՀՀ կառավարության միջոցներից ներդրվել է շուրջ 65 մլն. դրամ:

Վայքի ԲՄ-ին տրամադրվել է նաև ժամանակակից բժշկական սարքավորումներ / անզգայնացման սարք, վիրաբուժական լամպ, ֆունկցիոնալ մահճակալ/:

Հանրապետության առաջատար մասնագետների կողմից կազմակերպվել է <<Եղեգնաձորի ԲԿ>>, Վայքի ԲՄ>> և <<Ջերմուկի ԱԿ>> բժիշկների և բուժքույրերի համար գրիպի և էբոլա հիվանդությունների մասին գիտական կոնֆերանս <<Պացիենտների իրավունքների պաշտպան>> ՀԿ-ի հովանավորությամբ:

Հանրապետության առաջատար բժիշկ մասնագետների կողմից հաճախակի կազմակերպվում է <<Բաց դռների օր>>, որի արդյունքում 2015թ.-ին անվճար հետազոտվել են 642 հիվանդներ

ՏԵՂԵԿԱՆՔ

Առողջապահության բնագավառում **2014թ. և 2015թ. կատարված աշխատանքների մասին համեմատական**

	2014թ.	**2015թ.**
1. Բուժհիմնարկների թիվը	**8**	**8**
• բժշկական կենտրոն	1	1
• բուժական միավորում	1	1
• առողջության կենտրոն	2	1
• Գյուղական բժշկական ամբուլատորիա	0	1
• առողջության առաջնային պահպանման կենտրոն	4	4

2. **Ծնունդների թիվը**

• **հիվանդանոցային**	**495**	**449, այդ թվում՝**
• Եղեգնաձոր	294	255
• Վայք	199	193
• Ջերմուկ	2	1
• **ԶԱԳՍ-ի տվյալներով**	**645**	**596, այդ թվում՝**
• Եղեգնաձոր	425	404
• Վայք	163	130
• Ջերմուկ	57	62
5.Մահերի թիվը մարզում ԶԱԳՍ-ի տվյալներով	**487**	**531, այդ թվում՝**
Եղեգնաձոր	323	359
Վայք	115	125
Ջերմուկ	49	47
6.Գրանցված 0-5տարեկան Երեխաների մահերի թիվը	0	2
• տնային	0	1
• հիվանդանոցային	0	1

7. Գլոբալ բյուջեն	**585 837,4 հազ. դ.**	**605 227,8 հազ.դրամ**
8. կատարողականը /կատարված բժշկական ծառայություններ/	**566 731,8 հազ. դ.**	**598 861,4 հազ. դրամ**
9. ֆինանսավորումը	**566 731,8 հազ.դ.**	**598 861,4 հազ. դրամ**
10. Վճարովի բժշկական ծառայություններ	**38807.1 հազ.դրամ**	**38870.9 հազ. դրամ**
11.Համավճար՝	**4430,0 հազ.դրամ**	**4555,0 հազ. դրամ**
12. Մահճակալների թիվը	**85**	**85այդ, թվում**
Եղեգնաձորի բժշկական կենտրոն	**50**	**45**
Վայքի բուժմիավորում	**30**	**35**
Ջերմուկի առողջության կենտրոն	**5**	**5**

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն

Ղեկավարվելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից 2010թ. օգոստոսի 21-ի թիվ 80 որոշմամբ հաստատված կանոնադրությամբ, բաժնին վերապահված գործառույթների պահանջներով հաշվետու ժամանակահատվածում /2015թ հունվար-դեկտեմբեր/ բաժինն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում՝ համայնքների ղեկավարների մասնակցությամբ բացահայտել է մարզում բազմազավակ և բազմանդամ ընտանիքների վերաբերյալ տվյալները, թարմացվել 2015 թվականին մարզում ծնված և մահացած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվական բազան, կատարել կարիքների գնահատում :

Գենդերային հիմնահարցերով զբաղվող մշտական հանձնաժողովը տարվա ընթացքում հրավիրել է 4 նիստ, կազմել համապատասխան արձանագրություն: Մարզի համայնքներին է տրամադրվել ՀՀ- ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների իրավիճակային գնահատման մեթոդաբանության ձեռնարկը, իրականացվել է մեթոդական աշխատանք խոշոր համայնքներում՝ համայնքային զարգացման ծրագրերի կազմման ժամանակ գենդերային բաղադրիչի ներառման ուղղությամբ:

Ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համագործակցության արդյունքում մարզում անչափահասների իրավախախտման դեպքերը կրճատվել են: 2015 թվականի ընթացքում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ է գտնվել 7 անչափահաս, կանխարգելման, դաստիարակչական աշխատանքների շնորհիվ 2015 թվականի

դեկտեմբերի 30-ի դրութամբ հաշվառման մեջ է մնացել 4 անչափահաս: Իրավախախտ երեխաների նկատմամբ սահմանվել է հսկողություն, նշանակվել շեֆ դաստիարակ, լուծվել կողմնորոշման և տեղավորման, զբաղվածության խնդիրներ, կազմակերպվել են հանդիպումներ ծնողների հետ:

ՀՀ Ոստիկանության պետի 2013թ. նոյեմբերի 7-ի №3837 – Ա հրամանով ստեղծված միջգրատեսչական աշխատանքային խմբի հետ համատեղ իրականացրել են աշխատանքներ մարզում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերման և մուրացկանության և թափառաշրջիկության կանխարգելման ուղղությամբ: Ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների հետ անցկացրել են հանդիպումներ, կլոր սեղան, զրույցներ՝ անչափահասների շահագործման (թրաֆիքինգի) խնդիրների քննարկման, կանխարգելման նպատակով:

Իրականացվել են աշխատանքներ մարզի 10 կոնֆլիկտային ընտանիքներում ծագած խնդիրների լուծման ուղղությամբ /Փոռ1, Մալիշկա 2, Զառիթափ 1,Աղնջաձոր 1, Ելփին 1, Եղեգնաձոր 3, Արտաբույնք 1/:

Մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան, դպրոցահասակ բոլոր երեխաներն ընդգրկված են հանրակրթական համակարգում:

Ուսումնասիրության և համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ աշխատանքի արդյունքում հաշվառված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 268 երեխա, 2015 թվականին կատարվել է 96 երեխայի կարիքի գնահատում և գրանցվել <<Նորք>> տեղեկատվական կենտրոնում, թարմացվել է 3 երեխայի վերաբերյալ տեղեկատվական փաթեթը:

Մարզում առ 01.12.2015թ. խնամակալություն և հոգաբարձություն է սահմանվել 53 երեխայի նկատմամբ, որից 1-ի նկատմամբ 2015 թվականին. կատարվել է կարիքի գնահատում, վերցվել կենտրոնացված հաշվառման:

2015թ. որդեգրման համար բաժին է դիմել է 2 քաղաքացի: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում իրականացվել է որդեգրման 1 գործընթաց, իրավական հիմքերի բացակայության պատճառով մերժվել է երկրորդ դիմումը:

2015 թվականի ընթացքում Երևանի բժշկամանկավարժահոգեբանական /ԲՄՀ/ գնահատման կենտրոնի եզրակացության հիման վրա վկայագրվել է 45 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, վերավկայագրվել է 75-ը: 2015-2016թթ. ուս-տարվա ընթացքում մարզի ներառական կրթություն իրականացնող 6 հանրակրթական դպրոցներում սովորում են վկայագրված 122 երեխա: Հանրապետության հատուկ դպրոցներում սովորում են վկայագրված 9 երեխաներ:

Մարզի առանց ծնողական խնամքի մնացած 14 երեխաներ գտնվում են մանկատներում և գիշերօթիկ հաստատություններում, հատուկ դպրոցներում՝ 9-ը, ցերեկային խնամքի կենտրոնում՝ 2-ը:

Բաժինը սերտորեն համագործակցում է երեխաների հիմնահարցերով և իրավունքների ու շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների (‹‹Շուշան››, ‹‹Աշխատանք և հայրենիք››, ‹‹Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն››, ‹‹Սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն››, ‹‹ՀՕՄ››-ի Եղեգնաձորի մասնաճյուղի, ‹‹Հույս 98››, ‹‹Երիտասարդ սերունդ››) հետ, մասնակցելով նրանց կազմակերպած միջոցառումներին, օգտագործում նրանց ուժերն ու հնարավորությունները:

Մարզի դժվար իրավիճակում գտնվող ընտանիքներից 2015թ. երեք երիտասարդ աղջիկներ (Սալլիի, Զառիթափի և Կեչուտի համայնքներ) միջին մասնագիտական կրթություն են ստանում <<Հուսո այգի >> բարեգործական հիմնադրամի կենտրոնում:

Բաժինը 2015թվականի ընթացքում 34 քաղաքացիներից ստացած դիմումներին ժամանակին և սահմանված կարգով տվել է ընթացք և լուծում:

<u>Կրթություն, մշակույթ և սպորտ</u>

Մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, այդ թվում 14 հիմնական և 36 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան: 2 ավագ դպրոց և 1 կրթահամալիր գործում են ՀՀ ԿԳ նախարարության

ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, 5-ը՝ բարձր լեռնային բնակավայրերում:

Մարզի 50 դպրոցներում սովորում է 6541 աշակերտ, որից 797-ը ավագ դպրոցներում և կրթահամալիրում: Մարզի սահմանափակ կարողություններ ունեցող 81 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2, Վայքի, Ջերմուկի թիվ 1 հիմնական և Ջերմուկի թիվ 3, Շատինի միջն. դպրոցներում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար: Համայնքների ղեկավարների, մարզի վիճակագրական ծառայության և ՋԱԳՍ-ի բաժինների հետ համագործակցելով իրականացվում է դպրոցահասակ տարիքի երեխաների հաշվառումը, ինչի արդյունքում մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

Բացվել և գործում են 24 նախակրթարաններ, որոնցից 14-ը դպրոցներում: Դպրոցներում գործող նախակրթարաններում ընդգրկվել է 162 երեխա:

Դպրոցներում աշխատում են 1083 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (մոտ 80%-ը), մնացած 232-ը՝ միջնակարգ մասնագիտական:

ՈՒսուցիչ - աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1:6:

Դասարանի միջին խտությունը 13,5 - է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 16,1 ժամ:

Բոլոր դպրոցներն ապահովված են համակարգիչներով, որոնք օգտվում են ինտերնետ կապից: Մարզի հանրակրթական դպրոցներում հաջողությամբ ներդրվել է շախմատի ուսուցումը: Այդ նպատակով բոլոր դպրոցներն ապահովվել են անհրաժեշտ գույքով:

Արդյունավետ գործել են դպրոցների կառավարման խորհուրդները, որոնց անվանական կազմը 2012թ. հոկտեմբերի 12-ին հաստատվել է Վայոց ձորի մարզպետի որոշմամբ:

Ապահովված է դպրոցական շենքերի պահպանությունը: Ամբողջությամբ լուծված է աշակերտների դասագրքերով ապահովվածության խնդիրը, որոնց վարձավճարները հավաքագրվել են 98 տոկոսով:

Մարզպետարանի կրթության վարչությունը համագործակցում է ԿԳ նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի հետ: Տարբեր առարկաների գծով իրականացվել է 117 ուսուցիչների վերապատրաստում և ատեստավորում:

Վարչությունը սահմանված կարգով համագործակցելով ԿԳ նախարարության հետ անցկացրել է տարվա լավագույն <<ուսուցիչ>>, <<տնօրեն>>, <<դաստիարակ>> մրցույթները: Դրանց արդյունքները նախարարությունում ամփոփվել են սեպտեմբերի վերջին:

2015թ. դպրոցականների առարկայական օլիմպիադան կազմակերպվել և անցկացվել է ՀՀ ԿԳ նախարարության սահմանած ժամանակացույցով: Օլիմպիադաներին մասնակցել են շուրջ 800 աշակերտներ տարբեր առարկաներից: Բոլոր հաղթողները մարզպետի կողմից պարգևատրվել են դիպլոմներով, որոնք հանդիսավորությամբ հաձնվել են դպրոցներում: 40-ից ավելի աշակերտներ մասնակցել են հանրապետական փուլին, որոնցից 7-ը արժանացել են դիպլոմների և գովասանագրերի:

Կրթության վարչությունը ակտիվորեն համագործակցում է տարբեր հասարակական կազմակերպությունների հետ: Սիվիլիտաս ՀԿ-ի հետ կատարվել են մեծածավալ աշխատանքներ: Մարզի դպրոցներում <<Կրթության ժողովրդական կառավարման մարտահրավերները>> թեմայով անցկացվել են սեմինարներ: Վայոց ձորի մարզը համագործակցում է Ռուսաստանի Դաշնության Արխանգելսկի և Նիժնի Նովգորոդի նահանգների հետ; Այդ համագործակցության շրջանակներում կազմակերպվել են նաև կրթամշակութային միջոցառումներ: Համագործակցության արդյունքում հաշվի առնելով Մալիշկայի թիվ 2 և Ջերմուկի թիվ1 դպրոցների մանկավարժական կոլեկտիվների խնդրանքը Վայոց ձորի մարզպետի որոշմամբ Մալիշկայի թիվ 1 դպրոցը անվանակոչվել է Մ.Վ. Լոմոնոսովի անվամբ, իսկ Ջերմուկի թիվ 1 դպրոցը ՝ Մաքսիմ Գորկու անվամբ:

Հաջողությամբ իրականցվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4 րդ դասարանների երեխաները դպրոցում ստանում են սնունդ՝ հյութերի և թխվածքաբլիթի տեսքով ;

Սահմանված կարգով անցկացվել են տնօրենների ընտրություններ; Սահմանված կարգով կազմակերպվում են նաև դպրոցներում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթները; Մարզում անցկացվել է 37 ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ:

Մարզի դպրոցներում բարձր հիմքերի վրա է ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը: Բոլոր դպրոցներում կահավորվել են զինվորական կաբինետներ և առանձնացվել են ուսումնական զինանոցներ: Պատշաճ ձևով անցկացվել են <<Կորյուն >> ռազմամարզական խաղերը, <<Դիպուկ հրաձիգ>> մրցույթը: Բոլոր դպրոցները սահմանված գրաֆիկով ռազմադաշտային պարապմունքներ են

անցկացնում 4-րդ բանակային կորպուսում, իսկ աշակերտները հրաձգության են մասնակցում Վայքի զորամասի հրաձգարանում: Բոլոր դպրոցներում ստեղծվել և գործում են պատանի երկրապահների ակումբներ:

Գիտելիքների գնահատման և թեստավորման կենտրոնի հետ համագործակցելով, ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանած գրաֆիկով անցկացվել են միասնական և ավարտական քննությունները, որոնք անցել են առանց խախտումների: 9-րդ և 12-րդ դասարան ավարտած բոլոր շրջանավարտները ստացել են պետական նմուշի վկայականներ և ատեստատներ: Դիմորդների 30% -ը ընդունվել են բուհեր:

Մարզի դպրոցներում ներդրվել և գործում է <<Dasaran.am>> էլեկտրոնային ծրագիրը: Ծրագրով պահանջվող տվյալները դպրոցների կողմից մուտքագրվում են ժամանակին: Մուտքագրման աշխատանքներում կան որոշակի թերացումներ, որոնք կվերացվեն առաջիկայում:

Կազմակերպվել է մարզի սոցիալապես անապահով ընտանիքների 195 երեխաների ամառային հանգիստը Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:

Հուլիս ամսին ՀՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության կողմից կատարվեցին ուսումնասիրություններ կրթության վարչության վերջին 3 տարիների գործունեության վերաբերյալ, որի արդյունքում կազմված տեղեկանքով տրված հանձնարարականները կատարվել են ժամանակին և պատշաճ ձևով:

Նոր ուսումնական տարվա մեկնարկից առաջ անցկացվեց մարզի կրթության համակարգի աշխատողների խորհրդակցություն, որին մասնակցեց նաև ՀՀ ԿԳ փոխնախարար Կարինե Հարությունյանը:

ԴՏՀՏՇՀ-ի կողմից մարզի 1-ին դասարանների աշակերտներին հատկացվել են ուսումնական պլանշետներ: Դրանց օգտագործման նպատակով վերապատրաստվել են 1-ին դասարաններում պարապող բոլոր դասվարները:

Մարզի դպրոցականները ակտիվորեն մասնակցել են տարբեր մրցույթների, փառատոնների (ասմունքի, երգի փառատոն, շախմատի, ընթերցանության և այլ մրցույթներ):

ՄՇԱԿՈՒՅԹ

Մարզում գործում են մարզային և համայնքային ենթակայության 42 գրադարան, 31 մշակույթի տուն, 3 արվեստի, 1 գեղարվեստի և 2 երաժշտական դպրոց, 2 թանգարան և 2 մանկական ստեղծագործական կենտրոններ, պատկերասրահի 2 մասնաճյուղ:

Մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքում գործում է մարզային ենթակայության մշակույթի տուն, երաժշտական դպրոց և երկրագիտական թանգարան: Մարզի մշակութային և ստեղծագործական կոլեկտիվները հաջողությամբ մասնակցում են հանրապետական և մարզային մշակութային փառատոններին, մրցույթներին:

Մարզի մշակութային կյանքին աշխուժություն է հաղորդում տուրիզմի զարգացման արդեն զգացվող միտումները, որին մեծապես նպաստում են մարզի տարածքում առկա պատմամշակութային արժեք ներկայացնող վանական և եկեղեցական համալիրները, որոնց պահպանության համար ձեռնարկված են բոլոր անհրաժեշտ միջոցները:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել հետևյալ միջոցառումները.

1.<<Պարարվեստի>> -փառատոն—Եղեգնաձոր
2.<<Երգչախմբային>>-փառատոն-Վայք
3.Եղեգան փող>>- աշուղա-գուսանական փառատոն –Եղեգնաձոր
4.<<Ասմունքի >>փառատոն –Ջերմուկ,Վայք,Եղեգնաձոր
5.<<Ռուսական երգի>> փառատոն- Ջերմուկ, Վայք, Եղեգնաձոր
6.<<Հեղինակային երգի>> փառատոն- Եղեգնաձոր
7.Պետական տոների նշում-մարզի քաղաքներ
8.Ազգային տոների նշում- մարզի քաղաքներ
9 . Մասայակն միջոցառումներ –մարզի համայնքներ
10.Երիտասարդական հավաք –փառատոն Սիրանույշ ճամբար
11.Հոբելյանական տարելիցների նշում < Եղեռնի 100 ամյակ,Հայրենական Մեծ պատերազմի 70 ամյակ
12.<<Վայոց ձորը և եղեռնը>> նկարչական ցուցահանդես –երկրագիտական թանգարան
13.<<Երգի և բեքի տոն>> Եղեգնաձոր
14<<Գինու տոն>>-- Արենի
15 << Համայնքների տոն>>Մալիշկա, Ելփին, Ռինդ, Արենի,Եղեգնաձոր
16.Համագործակցվել է ՀՀ Մշակույթի նախարարության հետ և մարզի սահմանամերձ համայնքների 171 դպրոցականներ մասնակցել են ՀՀ կառավարության ծրագրում ներառված <<Մշակութային կազմակերպություն–դպրոց>> աբոնեմենտային համակարգի ներդրման պիլոտային ծրագրին:

Սպորտ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ ԿԳ նախարարությունների կողմից ուղարկված կանոնակարգերի և մարզպետի կողմից մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման մասին ընդունած որոշումների հիման վրա մարզում անցկացվում են սպորտային տարաբնույթ միջոցառումներ:

Մարզում գործող ուսումնական հաստատությունների 80 տոկոսն ունեն մարզադահլիճներ, իսկ մնացած ուսումնական հաստատությունները ֆիզկուլտուրայի դասաժամերը անցկացնում են հարմարեցված դասասենյակում, բոլոր ուսումնական հաստատությունները ունեն մարզահրապարականներ:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների ֆիզպատրաստականությունը կամակեպվում է հանրակրթական դպրոցներում ՀՀ կառավարության կողմից սահմանված պետական ծրագրով:Ամեն տարի մարզի հաստատություններում կազմակերպվում են ռազմամարզական խաղեր նախազորակոչային և զորակոչային երիտասարդության մասնակցությամբ:

2015 թ ռազմամարզական խաղերին մասնակցել են 1030 երիտասարդներ:

Երիտասարդները մասնակցել են նաև կրակային և ֆիզպատրաստականության դասընթացների:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները ՏԻՄ-երի կողմից խթանելու և բնակչության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով մարզում իրականացվում է ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն մարզական քաղաքային համայնք>>, <<լավագույն մարզական ընտանիք>> մրցույթները: Մարզի 3 քաղաքներում <<Վայք, Եղեգնաձոր, Ջերմուկ>> մրցույթին մասնակցեցին 122 ընտանիքներ: Տարեցտարի ավելանում է մրցույթի մասնակից ընտանիքների թիվը: Յուրաքանչյուր տարիքային խմբում 3 ընտանիքներ իրավունք ունեցան մասնակցելու մարզաըին փուլին: Մարզային փուլին մասնակցեցին 36 ընտանիքներ և նրանցից 12 մասնակցեցին Ծաղկաձորում կազմակերպված հանրապետական փուլին: Ընդանուր առմամբ նախագահի մրցանակի համար մարզից մրցույթին մասնակցեցին 366 մասնակիցներ:

2015թ. Ջերմուկ համայնքից հաշմանդամություն ունեցող մեկ ընտանիք մասնակցեց այս տարվա ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթին, արժանացավ երրորդ մրցանակի և պարգևատրվեց 400000 դրամով:

Մարզի 6 նախադպրոցական հիմնարկներ և 10 հաշվանդամություն ունեցող երիտասարդներ մասնակցել են ՀՀ նախագահի մրցանակի համար: <<Լավագույն նախադպրոցական հիմնարկ>> և <<հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթներին:

2015թ. ընթացքում իրականցվել են բնակչության ֆիզիկական դաստիարակության համալիր միջոցառումների ծրագրեր՝ նպաստելով բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով, սպորտով զբաղվելու պայմանների ստեղծմանը: Մեթոդական և խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել համայնքապետերին, մարզական կազմակերպություններին՝ ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական աշխատանքներ անցկացնելու ինչպես նաև առողջ ապրելակերպ քարոզելու գործում:

Համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկների սաների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տարբեր դասարանների աշակերտների շրջանում անցկացվել են սպորտլանդիաներ: Ձմեռային մարզաձևերը և և ազգային խաղերը մասսայականացնելու, մարզի ազգաբնակչության առօրյան հետաքրքիր դարձնելու նպատակով մարզի շուրջ 10 քաղաքային և գյուղական համայնքներում անցկացվել է <<Վայոցձորյան ձմեռ 2015>> մարզամշակութային մասսայական միջոցառումը: Եզրափակիչ միջոցառումը անցկացվեց Ջերմուկ քաղաքի ճոպանուղու տարածքում: 2015թ. կատարված աշխատանքների շնորհիվ ավելացել են ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի մասնակից ընտանիքների քանակը, հասնելով 100-ի:

Մարզում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ և ծրագրեր, որոնք ուղղված են երիտասարդության խնդիրների և հիմնահարցերի լուծմանը;

Արդեն ավանդույթ է դարձել և երեք օր տևողությամբ Եղեգնաձոր քաղաքում իրականացված երիտասարդ արվեստագետների բացօթյա ցուցահանդեսը: Տաղանդավոր երիտասարդները հնարավորություն ունեցան ցուցադրելու իրենց աշխատանքները հանրությանը, ավելի ճանաչելի դառնալու և կիսելու իրենցից փորձառու արվեստագետների հետ: Աչքի ընկած 3 երիտասարդներ մասնակցեցին Գյումրիում կազմակերպված նկարչական չորրորդ պլեներին:

Ստեղծվել է մարզպետին կից երիտասարդական խորհուրդ, որը պատրաստ է աջակցելու և կյանքի կոչելու երիտասարդների կողմից առաջադրված յուրաքանչյուր ծրագիր:

<u>ՏԻՄ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգում</u>

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ, ապահովվել է մարզի կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների, զինկոմիսարիատների, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ :

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 35.2-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի կողմից հաստատված տարեկան ծրագրին համապատասխան 2015 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի Արտավանի, Գոմքի, Բարձրունու, Սերսի, Վայքի Մալիշկայի, Գլաձորի, Եղեգնաձորի և Արենիի համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման նկատմամբ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացված վերահսկողության արդյունքում հայտնաբերվել են թերություններ ու բացթողումներ Տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքների պահանջների կատարման ուղղությամբ :

2015 թվականի ընթացքում կազմակերպվել են քննարկումներ բացահայտված թերությունների վերացման կապակցությամբ . ցուցաբերվել է մեթոդական , խորհրդատվական օգնություն:

Ձեռնարկված միջոցների արդյունքում նշված թերությունները վերացվել են:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.08.2015 թվականի թիվ 01/08.1/5008-15 գրությամբ թերությունների վերացման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն:

Նախապատրաստվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին որոշման նախագիծ, որը հաստատվել է 14.01.2015 թվականին մարզպետի N 1 որոշմամբ:

Նախապատրաստվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի համայնքներում 2015 թվականին բնակավայրերի սանիտարական մաքրման, ծառատնկման և կանաչապատման միամսյակ անցկացնելու մասին որոշման նախագիծ, որը հաստատվել է 18.03.2015 թվականին մարզպետի N 26 որոշմամբ:

2015 թվականի ընթացքում ներ է դրվել համայնքային ծառայողների գրանցամատյանի էլեկտրոնային կառավարման համակարգը:

Հաշվետու ժամանակաշրջանում 21 համայնքային ծառայողներ վերապատրաստվել են: Միաժամանակ վերապատրաստվել են 9 համայնքի ղեկավար և 41 ավագանու անդամներ:

2015 թվականի ընթացքում 23 համայնքային ծառայողներ ատեստավորվել են:

2015 թվականի ընթացքում մարզի համայնքներում համայնքային ծառայության 22 թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ, որոնց արդյունքում հաղթող են ճանաչվել և համայնքային ծառայության պաշտոններում նշանակվել են 17 քաղաքացի :

2015 թվականի ընթացքում մարզում համայնքային ծառայության պաշտոնների թիվը 184 է, որից թափուր են 9 պաշտոններ *:*

Օրենքով սահմանված կարգով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացվել են առաջարկություններ Եղեգնաձորի քաղաքապետարանի, Արենիի,Սերսի, Ելփինի, Խնձորուտու գյուղապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների ավանացանկերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 214-Ա որոշման համաձայն համայնքներին տրամադրվել է տեղեկատվություն 2014 թվականի երկրորդ կիսամյակում, 2015 թվականի առաջին կիսամյակում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված և հաշվառումից հանված քաղաքացիների տվյալների վերաբերյալ: Համայնքներին տրամադրվել է նաև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրում 01.01.2015 թվականի դրությամբ բոլոր հաշվառված քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 21-թիվ 562-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված թիվ 2 հավելվածով ՀՀ մարզպետների կողմից կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացվել է տեղեկատվություն համապատասխան պետական մարմիններ:

Ընդունվել է միգրացիայի հետ խնդիր ունեցուղ 147 քաղաքացու դիմում, սահմանված կարգով տվել է ընթացք: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից ստացվել է 152 քաղաքացու դիմումի պատասխան:

Համակարգվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարված աշխատանքները :

ՏԻՄ օրենքի պահանջների կատարման նպատակով աշխատանքներ են տարվել ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու, որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ :

Համակարգվել է ՀՀ Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը:

Համակարգվել են համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները, ինչպես նաև համայնքների ղեկավարների կողմից 2014 թվականի կատարած աշխատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունների գործընթացները:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ : Այդ նպատակով մարզի բոլոր համայնքներում տեղադրվել են ցուցատախտակներ, որոնց միջոցով համայքների ազգաբնակչությունը իրազեկվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ :

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ : Համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն և հանդիպում համայնքի բնակչության հետ :

Հաշվետու ժամանակաշրջանում համակարգվել են ՏԻՄ-երում հանրային սննդի, առևտրի և սպասարկման բնագավառներում կազմակերպվող աշխատանքները, որոնց արդյունքների վերաբերյալ տարածքային կառավարման նախարարություն ներկայացվել են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ:

Համակարգվել և անհրաժեշտ օժանդակություն է ցուցաբերվել զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների անցկացման աշխատանքներին

Համայնքներում իրականացված միջոցառումների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել եռամսյակային և կիսայակային հաշվետվություն:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 27.12.2014 թվականի թիվ 282-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.01.2015 թվականի թիվ 2 որոշման պահանջների 2015 թվականի ընթացքում վարչական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի, Ջերմուկի՝ քաղաքային և Արփիի, Ելփինի, Արտաբույնքի, Հերհերի, Սարավանի, Բարձրունու, Սերսի, Խնձորուտի, Արինի, Մարտիրոսի, Ռինդի, Վարդահովիտի, Շատինի գյուղական համայնքներում: Իրականացված վարչական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Հսկողության ժամանակ արձանագրվել են թերություններ և բացթողումներ <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Համայնքային ծառայության մասին>> , <<Իրավական ակտերի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Թափոնների մասին>>, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքների պահանջների կատարման ուղղությամբ :

Թերությունների և բացթողումների վերաբերյալ կազմվել են ակտեր, քննարկվել և սահմանվել են ժամկետներ թերությունների վերացման ուղղությամբ:

Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն և տեղադրվել մարզպետարանի կայքում:

- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել գրություն համապատասխան հիմքերով՝ Թառաթումբի համայնքի ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Վարչությունը համագործակցված աշխատանքներ է տարել ՏԻՄ ընտրությունների կազմակերպման ուղղությամբ.

- Համակարգվել է 2015 թվականի հունվարի 18-ին կայացած Վայքի քաղաքային համայնքի ղեկավարի, մարտի 15-ին կայացած Չիվայի, գյուղական համայնքի ղեկավարի, մայիսի 3-ին կայացած Թառաթումբի գյուղական համայնքի ավագանու, սեպտեմբերի 13-ին կայացած Գողթանիկի գյուղական համայնքի ղեկավարի ընտրությունների և դեկտեմբերի 6-ին ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստման և կազմակերպման գործընթացները:

Համակարգվել է 2015 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքում անցկացվող «Գյուղական համայնքների 5-րդ համաժողով»-ի կազմակերպչական աշխատանքները:

2015 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի բնակիչներից ստացել ենք 30 դիմում բողոք, բոլոր դիմումներին տրվել է ընթացք սահմանված կարգով:

Վարչությունը ապահովել է մարզի ՏԻՄ-երի և մարզպետարանի աշխատակազմի փոխհարաբերությունները .

-կազմակերպվել են խորհրդակցություններ,

-ապահովվել է մարզխորհրդի նիստերին ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ծառայությունների մասնակցությունը:

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ : Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները :

2015 թվականի ընթացքում Տի և ՀԳՄ հարցերով վարչությունը պատասխանել է 797 գրության:

Ֆինանսներ և սոց. տնտ. Զարգացում՝

ՀՀ,, 2015թ. պետական բյուջեի մասին,, ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետարանին 23 ծրագրերով 2015թ նախատեսվել են ծախսեր 3218212.0 հազ.դրամ փաստացի ֆինանսավորվել է 3178350.01 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 98.8%-ով, որից

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդ՝ Ծրագիր 11.01.01

Նախատեսվել է 643303.9 հազ.դրամ և ֆինանսավորվել է 635818.53 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 98.84 %-ով:

Ըստ ծրագրերի նախատեսվել և ֆինանսավորվել է...

-Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային, կառավարման մարմինների պահպանում. Ծրագիր 01-01-01-03:

2015թ. պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 373522.3 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 367769.72 հազ.դրամ, դրամարկղային ծախսը կազմում է 367769.72 հազ դրամ:Ֆինանսավորումը կատարվել է 98.5 %-ով:

Տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում Ծրագիր 01-01-01-10:

2015թ. պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 3000.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 2663.4 հազ.դրամ : Ֆինանսավորումը կատարվել է 88.8 %-ով:

Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին**:** Ծրագիր 01-08-01-04:

2015թ. պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 39236.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել 26740.65 հազ.դրամ : Ֆինանսավորումը կատարվել է 68.8 %-ով:

-Կրթություն

Ըստ կրթության ոլորտի ծրագրերի նախատեսվել և ֆինանսավորվել է...

-Հանրակրթական ուսուցման ծրագրեր- տարրական ընդհանուր կրթութուն ծրագիր՝ 09-01-02-01 նախատեսվել է 575093.2 հազ. դրամ , ֆինանսավորվել է 575093.2 հազ.դրամ , ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

- Հանրակրթական ուսուցման ծրագրեր- հիմնական ընդհանուր կրթություն ծրագիր՝ 09-02-01-02

նախատեսվել է 714214.7 հազ. դրամ , ֆինանսավորվել է 714214.7 հազ. դրամ , ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով:

-Հանրակրթական ուսուցման ծրագրեր- միջնակարգ ընդհանուր կրթություն ծրագիր '09-02-02-02

նախատեսվել է 368519.1 հազ. դրամ, ֆինանսավորվել է 368519.1 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

-Հիմնական Ներառական ուսուցում ծրագիր՝ 09-02-01-05
Նախատեսվել է 22939.8 հազ.դրամ, ֆինանսավորվել է 22939.8 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

-Տարրական Ներառական ուսուցում ծրագիր՝ 09-01-02-04
Նախատեսվել է 31542.2 հազ.դրամ, ֆինանսավորվել 31542.2 հազ.դրամ,
ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

-Նախադպրոցական կրթություն ծրագիր՝ 09-01-01-01

Նախատեսվել է 19704.6 հազ. դրամ, ֆինանսավորվել է 19407.6 հազ.դրամ,

ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

-Հանրակրթական ծրագրերի իրականացման օժանդակության շրջանակներում հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում ծրագիր՝ 09-06-01-12

Նախատեսվել է 19931.7 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 19931.7 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0 %-ով:

- Արտադպրոցական դաստիարակություն ծրագիր՝ 09-05-01-02

Նախատեսվել է 52540.0 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 52540.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%:

-Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցում ծրագիր՝ 09-05-01-05

Նախատեսվել է 23206.0 հազ.դրամ ,փաստացի ֆինանսավորվել է 23206.0 հազ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Գործուղված մանկավարժների փոխհատուցման ծախսեր ծրագիր՝ 09 06 01 11

Նախատեսվել է 200.0 հազ.դրամ: փաստացի ֆինանսավորվել է 185.0.0 հազ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 92.5%-ով:

- ***Ատեստավորված մանկավարժների լրացուցիչ վճարներ ծրագիր՝*** 09 06 01 37

Նախատեսվել է 4020.3 հազ.դրամ; փաստացի ֆինանսավորվել է 4020.3 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

-Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում ծրագիր՝09 06 01 27

Նախատեսվել է 1914.8 հազ.դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 1914.6 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

-Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում ծրագիր՝09 06 01 34

Նախատեսվել է 57106.6 հազ.դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 57106.6 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Ըստ մշակույթի ոլորտի ծրագրերի նախատեսվել և ֆինանսավորվել է

- Պետական աջակցություն Թանգարաններին ծրագիր՝ 08-02-02-01

Նախատեսվել է 14979.6 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 14979.6 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

-Համայնքի մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագիր՝ 08-02-03-01

Նախատեսվել է 2281.8 հազ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 2281.8 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը, ծրագիր՝ 08-02-05-03

Նախատեսվել է 4938.5 հազ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 4938.5 հազ.դրամ,

ֆինանսավորումը կատարվել է 100.0 %-ով:

-Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում,ընթացիկ նորոգում

Նախատեսվել է 68700.0 հազ. դրամ:Փաստացի ֆինանսավորվել է 68700.0 հազ. դրամ,

ֆինանսավորումը կատարվել է 100.0 %-ով:

-Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում Ծրագիր[4] 10-09-02-02

Նախատեսվել է 94248.0 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 82277.76 հազ. դրամ,

ֆինանսավորումը կատարվել է 87.3 %-ով:

Ֆինանսավորումն իրականացվել է ներկայացված հայտերին համապատասխան:

Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին ծրագիր[4] 01- 08- 01- 02

Նախատեսվել է 83068.9 և ֆինանսավորվել է 81262.3 հազ.դրամ:Ֆինանսավորումը կատարվել է 97.8 %-ով:

ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդ

Ծրագիր 11.01.01

Նախատեսվել է 643303.9 հազ.դրամ և ֆինանսավորվել է 635818.53 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 98.84 %-ով:

« Վայոց ձորի մարզի համայնքների կողմից եկամուտների հազաքագրումը 01.01.2016 թվականի դրությամբ կազմել է 1901216.0 հազ.դրամ, որի աճը 2014 թվականի միևնույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 26.9 տոկոս կամ 402587.0 ընդամենը գումարով: Սեփական եկամուտների հավաքագրումն առ 01.01.2016 թվականի դրությամբ կազմել է 548334.0 հազ.դրամ կամ հավաքագրումը կատարվել է 101.0 տոկոսով, աճը 2015թվականի համեմատ կազմել է 0.4 տոկոս, գումարով՝ 2410.0 հազ.դրամ, այդ թվում

- հողի հարկ հավաքագրվել է 67054.0 հազ.դրամ կամ հավաքագրումը կատարվել է 97.2 տոկոսով
- գույքահարկ՝ հավաքագրվել է 147004.0 հազ.դրամ կամ հավաքագրումը կատարվել է 107.8 տոկոսով, աճը 2015 թվականի դրությամբ՝10.3տոկոս, գումարով՝ 13783.0 հազ.դրամ
- տեղական տուրք՝ հավաքագրվել է 21964.0 հազ.դրամ կամ հավաքագրումը կատարվել է 105.3 տոկոսով, աճը 2015 թվականի դրությամբ՝ 17.2 տոկոս, գումարով՝ 3231.0 հազ.դրամ
- պետական տուրք՝ հավաքագրվել է 5936.0 հազդրամ կամ 86.0 տոկոսով,

- գույքի վարձակալությունից եկամուտներ՝ հավաքագրվել է 306377.0 հազդրամ կամ հավաքագրումը կատարվել է 99.0 տոկոսով : Պետության կողմից համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան 2015թվլսկանի համար նախատեսվել է 920112.0 հազ.դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է, որի աճը 2014 թվականի դրությամբ՝ 11.2 տոկոս, գումարով՝ 92434.4 հազ.դրամ: ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բնագավառ

Հանրային իրազեկումը Վայոց ձորի մարզպետարանի աշխատանքային ծրագրի մաս է կազմում և կոչված է հիմնականում լուսաբանելու այդ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, գործընթացները և դրանց արդյունքում սպասվող ակնկալիքներն ու ձեռքբերումները:

2015 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվելով բաժնի կանոնադրությամբ և բաժնին վերապահված գործառույթների, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրի պահանջներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԿԱՅՔԵՐՈՎ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐՈՎ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումը մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից իրականացվել է <<Միասնական տեղեկատվական հարթակ>>-ի, մարզային <<Վարդաձոր>>, <<ԱգրոԿամուրջ>> ամսաթերթի, <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթի, միջոցով:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷՋԻ <<ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ>> ԲԱԺՆՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարզպետի գործունեության հրապարակայնությանն են ուղղված եղել նաև պաշտոնական կայքի <<Նորություններ>> բաժնի նյութերը: 2015թ. ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքի <<Նորություններ>> բաժնում տեղադրվել են 435 լուսաբանական նյութեր, որոնք լրատվական բնույթի հաղորդումներ են:

Դրանք արտացոլել են մարզպետի աշխատանքային գործունեությունը, մարզպետի՝ մարզի տարբեր համայնքներում կատարած աշխատանքային այցերը, մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունները, մարզի համայնքներում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը, տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ մարզպետարանում հրավիրված քննարկումները, կրթամշակութային անցուդարձը, ինչպես նաև ՀՀ և օտարերկրյա պատվիրակությունների մարզ կատարած աշխատանքային այցերը, մարզպետի հանդիպումները հանրապետական և միջազգային տարբեր կազմակերպությունների կամ նրանց ներկայացուցիչների հետ և այլ բնույթի աշխատանքները

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷՋԻ ԱՅԼ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում մշտապես թարմացվել են Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքի ներքոնշյալ բաժիններն իրենց ենթաբաժիններով.

Տարվա ընթացքում բացվել են նոր բաժիններ՝ << ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների կողմից աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մասին>> և<< Հիվանդանոցային և արտահիվանդանոցային բուժօգնության և սպասարկման, ախտորոշիչ հետազոտությունների վճարովի ծառայությունների անվանացանկ>> վերնագրերով և լրացվել համապատասխան նյութերով:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2015 թվականի ընթացքում ԶԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից Վայոց ձորի մարզպետարանին արվել է տեղեկատվական 4 հարցում, որոնց պատասխան է տրվել օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ ԱՍՈՒԼԻՍՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2015 թվականի փետրվարի 17 –ին կազմակերպվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի մամուլի ասուլիսը պաշտոնավարման 100 օրվա և 2014 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գործունեության արդյունքների ամփոփման վերաբերյալ, որին մասնակցել են մարզային ամսաթերթերի՝ ,,Վարդաձոր,, անկախ պարբերականի և ,,ԱգրոԿամուրջ,, Վայոց ձորի ԳԱՄԿ – ի պաշտոնաթերթի խմբագիրները և մի շարք հասարակական կազմակերպությունների ղեկավարներ: Ասուլիսը լուսաբանվել է մարզպետարանի կայքի, մարզային ամսաթերթերի և ,,Հայաստանի Հանրապետություն,, ՀՀ կառավարության պաշտոնական օրաթերթի և ,,Հանրապետական միասնական տեղեկատվական հարթակ,, կայքի միջոցով:
ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և մարզպետի 2015 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքների ամփոփման վերաբերյալ մամուլի ասուլիս է կազմակերպվել ս/թ. հունիսի 30-ին, իսկ տարեկան գործունեության արդյունքների ամփոփիչ ասուլիսը կայացել է ս/թ. դեկտեմբերի 25-ին, որոնց մասնակցել են մարզային ամսաթերթերի ,,Վարդաձոր,, անկախ պարբերականի և ,,ԱգրոԿամուրջ,, Վայոց ձորի ԳԱՄԿ – ի պաշտոնաթերթի խմբագիրները, Վայոց ձորի թեմի լրատվության պատասխանատուն և մի շարք հասարակական կազմակերպությունների ղեկավարներ: Ասուլիսները լուսաբանվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և Վայոց ձորի թեմի կայքերով, ինչպես նաև վերը նշված հանրապետական ու մարզային լրատվամիջոցներով:

Իրավաբանական բաժին

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժինը 2015թ. ընթացքում հետևել է մարզի ավագանիների և համայնքի ղեկավարների որոշումների համապատասխանությանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Հաշվետու ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 1425 որոշում, որոնք հիմնականում վերաբերվում են համայնքների բյուջեների ընդունմանը, դրանցում կատարված գումարային և հոդվածային վերաբաշխումներին, համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի, դրույքաչափերի հաստատմանը, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարմանը համաձայնություն տալուն և ներհամայնքային այլ խնդիրների: Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են համայնք՝ համապատասխան ուղղումների, որոնք սահմանված կարգով ուղղվել և վերադարձվել են մարզպետարան: Մասնավորապես հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից խմբագրման են վերադարձվել Փոռ, Քարագլուխ, Գոմք, Զառիթափ, Խաչիկ, Աղնջաձոր, Ազատեկ, Ռինդ, Արտաբույնք, Հորս, Չիվա, Ջերմուկ, Վարդահովիտ, Արենի, Արտավան, Եղեգնաձոր, Վայք, Կարմրաշեն, Գլաձոր, Թառաթումբ, Սարավան, Խնձորուտ համայնքների ավագանիների թվով 45 որոշումներ, պատասխանվել են քաղաքացիների դիմումների: Կիսամյակի ընթացքում տրվել են բանավոր խորհրդատվություններ՝ ինչպես քաղաքացիների, այնպես էլ համայնքի ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցների: Մասնավորապես՝ համայնքների ղեկավարներին տեղեկացվել է հարկերի և տուրքերի գծով գոյացած ապառքների գանձման համար վարչական վարույթի իրականացման գործընթացը:

Ուսումնասիրվել են մարզպետի և աշխատակազմի ղեկավարի քննարկմանը ներկայացվող իրավական ակտերի՝ որոշումների, կարգադրությունների և հրամանների նախագծերի համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրությանը, դրանց վերաբերյալ տրվել համապատասխան եզրակացություններ:

Ամենամսյա տեղեկատվություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն՝ մարզի համայքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

2015թ. հունվարի 30-ին տեղի ունեցած մարզխորհրդի նիստում բաժնի պետը հանդես է եկել ՀՀ իրավական ակտերում կատարված փոփոխությունների և նոր ընդունված իրավական ակտերի վերաբերյալ ելույթով:

Բաժինը զբաղվել է աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից <<Եղեգնաձորի երաժշտական դպրոց>> ՊՈԱԿ-ում կատարված աուդիտի արդյունքում հայտնաբերված թերությունների շտկմանը: <<Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա. Մելիքյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում իրականացվել է փաստաթղթային ուսումնասիրություն:

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության կողմից <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> և <<Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա. Մելիքյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ների տնօրենի նկատմամբ հարուցված քրեական գործերի շրջանակներում բաժնի պետը ճանաչվել է որպես մարզպետարանի ներկայացուցիչ և մասնակցել է <<Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> և <<Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի Ա. Մելիքյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ների տնօրենների գործով դատական նիստերին:

Մասնակցել ենք Արտաբույնք, Արփի, Ելփին, Սարավան, Հերհեր, Վայք, Ջերմուկ, Վարդահովիտ, Ռինդ, Մարտիրոս, Շատին Բարձրունի, Սերս, Խնձորուտ և Արին համայնքներում իրականացված վարչական հսկողությանը:

Մարզի 5 առողջության կենտրոններ փակ բաժնետիրական ընկերություններից վերակազմավորման եղանակով վերակազմակերպվել են պետական ոչ առևտրային կազմակերպությունների:

Մարզի ավագանիների որոշումները բաժնի կողմից տեղադրվում են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում:

Բաժնի պետն ի պաշտոնե հանդիսանում է ներքին աուդիտի կոմիտեի անդամ և 2015թ. ընթացքում մասնակցել է կոմիտեի նիստերին, ներկայացրել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ:

Բաժնի կողմից մշակվել է <<Վայոց ձորի զարգացում>> մարզային հիմնադրամի կանոնադրությունը, հիմնադրի որոշումը:

Պատասխանվել են տարբեր պետական մարմինների և այլ կազմակերպությունների կողմից ստացված գրություններին, ընթացիկ գրություններին և դիմումներին պատշաճ պատասխանելու համար հարցումներ են կատարվել ՀՀ մշակույթի, կրթության և գիտության նախարարություններին, պետական ռեգիստրի գործակալությանը:

Ներքին աուդիտի բաժին

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2015թ.-ի տարեկան ծրագրի շրջանակներում ներքին աուդիտի բաժնի կողմից նախատեսվել և իրականացվել է 43 աուդիտ, որից 22 միավոր մարզային ենթակայության Հանրակրթական ՊՈԱԿ-ներում, 8 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ներում, 9 միավոր մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներում և 4 միավոր մարզպետարանի գնումների գործընթաց :ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ներում իրականացվել է ֆինանսական աուդիտ ,մարզպետարանի աշխատակազմում ՝ գնումների գործընթացի գնումների օրենսդրությանը համապատասխանության աուդիտ և ստորաբաժանումների գործունեության ոլորտը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության աուդիտ:Նշված ՊՈԱԿ-ներում,ՓԲԸ-ներում և մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներում, գնումների գործընթացի աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները :Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյաների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը,գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները: Հրավիրվել է Ներքին աուդիտի կոմիտեի 10 նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները,կայացվել համապատասխան որոշումներ :Աուդիտի ենթարկված ՊՈԱԿ-ների,առողջապահական ՓԲԸ-ների և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման ղեկավարներին տրվել են հանձնարարականներ,ներկայացվել առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ:Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է խորհրդատվություն և վերահսկողության գործընթաց:

Աուդիտի հաշվետվությունները տեղադրվել են Վայոց ձորի մարզպետարանի vdzor.gov.am

պաշտոնական կայքում, ստուգումների արդյունքներ բաժնում:

Ներքին աուդիտի բաժնի կողմից ամբողջությամբ կատարվել է 2015 թ.-ի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

Հաշվետվությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի, ծրագրային մուտքագրմամբ ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Քարտուղարություն

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2015 թվականին մարզպետի կողմից ընդունվել են 112 որոշումներ, 147 կարգադրություններ,աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 256 հրամաններ. հրավիրվել են մարզխորհրդի 4 նիստեր:

2015 թվականին աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 6898 և ելք են արվել 7973 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2015 թվականին մարզպետի մոտ կատարվել է 1572 քաղաքացիների ընդունելություն:

Տարվա ընթացքում ստացվել և ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմից ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 51

դիմումներ, որից՝ 7-ը ստացվել են Ջերմուկի, 18-ը Վայքի, 26-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2015թ 1315 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 83 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր,իսկ 36-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական,կենցաղային,գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատնքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

Հաշվի առնելով Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակը ՀՀ Վայոց ձորի մարզպետը 2015թ. մայիսի 6-ի N 40 որոշմամբ ԵԿՄ Եղեգնաձորի տարածքային բաժանմունքին է հատկացրել 250 հազար դրամ, իսկ 2015թ մայիսի 8-ի N 41 որոշմամբ՝ Հայրենական Մեծ պատերազմի Եղեգնաձորի տարածքային խորհրդին է տրամադրել 700 հազար դրամ, իսկ նույն օրվա N 42 որոշմամբ՝ վետերանների Վայքի տարածքային խորհրդին է հատկացվել 300 հազար դրամ: Մեր հոգածության կենտրոնում են եղել նաև մարզի տարեցները, որոնց 2015թ սեպտեմբերի 24-ին մարզպետի N 75 որոշմամբ՝ տրամադրվել է 250 հազար դրամի աջակցություն:

2015թ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 1572 քաղաքացիներ, որից՝

1.	Դրամական օգնություն	1315
2.	Նպաստի հարցերով	6
3.	Հողային վեճեր և սահմանների ճշտում	25
4.	Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	19
5.	Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	23
6.	Աշխատանքի տեղավորման	32
7.	ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	4

8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու 83
9. Պետ.պատվերով բուժօգնություն 36
10. Որդեգրման հարցերով 2
11. Երեխաներին կրթության առանձնահատուկ պայման. մեջ ընդգրկելու 26
12. Խնամնակալություն և հոգեբարձություն սահմանելու խնդրանքով 1

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆ

2015 թվականի ընթացքում բաժնի կողմից նախապատրաստվել են անձնակազմի կառավարման գծով մարզպետի՝ 10 որոշումներ, 147 կարգադրություններ և աշխատակազմի ղեկավարի 256 հրամաններ:

Նախապատրաստվել և իրականացվել են մրցույթներ՝ 5 քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների և 2 ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության՝ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

Մրցույթի արդյունքում հաղթած և պաշտոնի նշանակված քաղաքացիական ծառայողների համար սահմանված կարգով կազմվել են անձնական գործեր:

Աշխատակազմում ատեստավորվել են բարձրագույն պաշտոն զբաղեցնող՝1, գլխավոր ՝ 9, առաջատար և կրտսեր՝ 14 քաղաքացիական ծառայողները :

8 քաղաքացիական ծառայողների շնորհվել է քաղաքացիական ծառայության առավելագույն և համապատասխան դասային աստիճաններ:

Սահմանված կարգով իրականացվել է աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքները, ըստ որի գրաֆիկով նախատեսված տարբեր ժամանակահատվածներում, երկշաբաթյա մասնագիտական վերապատրաստում են անցել աշխատակազմի թվով 21 քաղաքացիական ծառայողներ:

Ամփոփվել է աշխատակազմի քաղաքացիական ծառայողների կողմից անձնական գործին կցելու և աշխատակազմի ղեկավարին նպատակով յուրաքանչյուր ստորաբաժանում անձնակազմի կառավարման ստորաբաժանում ներկայացված կատարողականների գնահատականները, տվյալ պաշտոնի համար համապատասխան կարգով սահմանված ձևով գնահատված կառավարչական հմտությունները և աշխատողի կատարողականի ընդհանուր գնահատականը: Ապահովվել է օրենքով նախատեսված գործընթացների ժամկետների պահպանման աշխատանքները (թափուր պաշտոնների մասին ժամկետում ՔԾԽ տեղեկացնելու, քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակելու, քաղաքացիական ծառայության դասային աստիճան շնորհելու, քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու):

Մշտապես տեղեկատվա-վերլուծական ծրագրի միջոցով իրականացվել է աշխատակազմի հաստիքացուցակիՊ և քաղաքացիական ծառայողների հետ կապված փոփոխությունների տրամադրումը քաղաքացիական ծառայության խորհուրդ և տարածքային կառավարման արտակարգ իրավիճակների նախարարություն :

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքից ազատվել են 5 քաղաքացիական ծառայողներ, աշխատանքի են ընդունվել՝ 10 քաղաքացիներ: Աշխատակազմում 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է 1 թափուր և 1 ժամանակավոր թափուր պաշտոններ: